

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ն ե ր ա ծ ո թ յ ո Ւ Ն

Գեղագիտական դաստիարակության առարկաների մեջ երաժշտությունը հատուկ տեղ է զբաղում՝ այն կարող է ամենաուժեղ ազդեցությունն ունենալ մարդու վրա: Երաժշտության ազդեցության տակ մարդու զգայական ոլորտը հարստանում է, նրա մոտ ձևավորվում է սեփական վերաբերմունք տարբեր արժեքների հանդեպ՝ բարու, զեղեցիկի, զարգանում է ազգային ինքնագիտակցության զգացում... Երաժշտության զգայական ազդեցությունն այնքան բացահայտ է, որ սովորվում է նրա մյուս գործառույթը: Ինչպես ցույց տվեցին նորագույն գիտական հետազոտումները, երաժշտությունն ունի կոգնիտային բնույթ, և նրա ուսումնասիրումը զգալի ազդեցություն է ունենում սովորողների ընդհանուր ակադեմիական առաջադիմության վրա:

Երաժշտության դասերին երեխան մոտենում է երաժշտությանը, ընտելանում է նրան: Այդ դեպքում կարևոր է նրա մեջ արթնացնել հետաքրքրություն և ստեղծագործական նախադրյալ, որպեսզի երաժշտության հետ շփումը նրա համար դառնա հաճույք: Իհարկե, դպրոցը չի նախատեսում երաժշտի համար պարտադիր մասնագիտական կարողությունների դաստիարակում: Առավել ևս, որ բոլոր երեխաներն ունեն տարբեր բնածին տվյալներ:

Առարկայի նկատմամբ հետաքրքրության արթնացմանը շատ է նպաստում ինտեգրված ուսուցումը: Ինտեգրումը կարող է լինել տեսողական արվեստի (կոմպոզիտորի դիմանկար, Վրաստանի որևէ անկյան տեսարան, երաժշտությունից ստացած տպավորությունների պատկերում գույներով...), թատերական արվեստի (էտյուդ, երաժշտական ներկայացում, ներկայացման երաժշտական ձևավորում...), պարի (երաժշտությամբ առաջացած զգացմունքների արտահայտում մարմնի շարժումներով, պարային շարժումների ուսումնասիրում), պոեզիայի, գրական ստեղծագործությունների (երաժշտական ստեղծագործությունների գրական սկզբնաղբյուր, վոկալ ստեղծագործությունների տեքստ), պատմության (դարաշրջանի, պատմական իրադարձություններ...), մաթեմատիկայի (նոտաների տևողություն, համաչափության սկզբունքներ...), ինֆորմատիկայի (երաժշտական համակարգչային ծրագրեր), ֆիզիկայի (հնչյունը, որպես տատանումների միագումարություն, երաժշտական գործիքների առանձնահատկություններ՝ ելնելով ակուստիկայի սկզբունքներից...) հետ և այլն:

Երաժշտության դասավանդման նպատակը.

- աշակերտի ներգրավում ստեղծագործական և մեկնաբանության գործունեության մեջ, դրա համար անհրաժեշտ կարողությունների և ունակությունների ձեռքբերում և զարգացում,
- նրա դաստիարակում՝ որպես «ունկնդիր», ժողովրդական և դասական երաժշտության բարձրարվեստ նմուշների հետ ծանոթացնելու միջոցով,
- գիտելիքների ստացում երաժշտության ոլորտում, ինչը կնպաստի սովորողի՝ որպես կրթված, բարեկիրք մարդու, ձևավորմանը:

Երաժշտության դասավանդման խնդիրներ.

- երաժշտական լսողության զարգացում,
- ռիթմի զգացողության զարգացում,
- երաժշտական հիշողության զարգացում,
- ունկնդրման հմտության ձևավորում:

Համաձայն նոր ուսումնական պլանի՝ երաժշտության դասավանդումը նախատեսվում է հանրակրթական դպրոցի բոլոր երեք աստիճաններում. տարրական և բազային աստիճանում պարտադիր առարկայի ձևով, իսկ միջնակարգ դպրոցում՝ պարտադիր և կամընտրական առարկաների ձևով:

Տարրական աստիճանում հատկապես մեծ է երաժշտությունն առարկայի նշանակությունը, երբ երեխայի բնածին, բնական կարողությունները, հակումները դեռ լրիվ չեն բացահայտվել, և անհրաժեշտ է դրանք հայտնաբերել, կառավարել: Երեխային հոգեհարազատ տարբեր տեսակի ակտիվություններով (խաղ, իմպրովիզացիա), կարելի է նրան գրավել և հետաքրքրել երաժշտությամբ: Այդ աստիճանում երաժշտության դասավանդումը նախատեսում է սովորողների ստեղծագործական կարողությունների ակտիվացում, նրանց ներգրավում համատեղ ստեղծագործական գործընթացի մեջ:

Բազային աստիճանում երաժշտության դասին ստացած գիտելիքները, գործնական հմտություն-կարողությունները թեթևացնում են դեռահասի սեփական ես-ի որոնման և ինքնագնահատման գործընթացը: Երաժշտությունը համարվում է երեխայի և նրա հետաքրքրությունների զարգացման և հետաքրքրությունների ճիշտ կազմակերպման ամենալավ միջոց: Այն զգալիորեն կմեղմացնի նրա այն քննադատական վերաբերմունքը շրջապատող աշխարհի հանդեպ, որը հատուկ է այդ տարիքին, քանի որ արվեստի ստեղծագործությունը հասկանալու կարողությունը ենթադրում է նաև ուրիշի կարծիքի և այլ աշխարհայացքի հանդեպ հանդուրժողական վերաբերմունք:

Միջնակարգ աստիճանը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի. անցումային X դասարան և XI-XII դասարաններ:

X դասարանում երաժշտության դասընթացը սովորողին հնարավորություն կտա, բացի գործնական ստեղծագործական գործունեությունից, իմաստավորել և գիտակցել երաժշտական կուլտուրայի զարգացման առանձնահատկությունները և ընկալել դրանք պատմական կտրվածքում:

Ուշագրավ է, որ VIII, IX և X դասարաններում 2009-10 ուսումնական տարվանից գեղագիտական ցիկլի առարկաները (1. կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում, 2. երաժշտություն) դասավանդվում են եռամսյակային սկզբունքով: VIII-IX դասարաններում դպրոցն ինքը կվճռի ինչպես բաշխել գոյություն ունեցած ժամերը երկու առարկաների միջև: Հնարավոր է.

- Երաժշտությունը դասավանդվի 1 եռամսյակ, կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը՝ 2 եռամսյակ,

- Երաժշտությունը դասավանդվի 2 եռամսյակ, կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը՝ 1 եռամսյակ,
- այդ առարկաների միջև հավասարաչափ բաշխվեն ժամերը, այսինքն՝ յուրաքանչյուր առարկան դասավանդվի մեկ և կես եռամսյակի ընթացքում:

Իսկ X դասարանում կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը և երաժշտությունը մեկական եռամսյակի ընթացքում են ուսուցանվում:

11-12-րդ դասարաններում, երբ աշակերտը պատրաստ է իմաստավորված ընտրության համար, նրան հնարավորություն է տրվում գեղագիտական դաստիարակության առարկաների խմբից, սեփական հետաքրքրությունների համաձայն, ընտրել և ուսումնասիրել որևէ մեկը, այդ թվում նաև երաժշտության ուսումնական դասընթացը:

Ուսուցման ուղղություններ

Երաժշտության դասավանդումը ծավալվում է երեք ուղղություններով.

1. գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում երաժշտության մեջ,
2. հաղորդակցություն և մեկնաբանություն,
3. երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում:

Բոլոր երեք ուղղություններով դասավանդումը իրագործվում է զուգահեռաբար և սերտ փոխադարձ կապի մեջ:

1. Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում երաժշտության մեջ

Այս ուղղության շրջանակներում սովորողների մոտ մշակվում և ձևավորվում են գործնական հմտություններ, որոնք ծառայում են նրանց ստեղծագործական կարողությունների՝ երգեցողության, երաժշտական և թատերական իմպրովիզացիայի, պարի, բացահայտմանը և ակտիվացմանը: Աշակերտներն ուսումնասիրում են երաժշտական տարրեր, սովորում են գրել և կարդալ նոտաներ, ռիթմ, ծանոթանում են երաժշտական համակարգչային ծրագրերին:

Աշակերտները տարբեր տրամադրություններ, զգացմունքներ, սյուժեներ, թեմաներ, գաղափարներ են արտահայտում, որոնց նրանք հանդիպում են երաժշտական ստեղծագործության մեջ կամ իրենց միջավայրում: Դրա համար նրանք ընտրում և օգտագործում են արտահայտման համապատասխան ձևեր և արտահայտչականության միջոցներ, որոնց ծանոթացել են երաժշտության դասերին: Բացի այդ, երաժշտության դասերին սովորողները տիրապետում են այնպիսի ընդհանուր գործնական կարողությունների, ինչպիսիք են պլանավորման, կազմակերպման, խմբային աշխատանքի հմտությունները :

2. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Այս ուղղության շրջանակներում աշակերտներն ընտելանում են լսել և գնահատել երաժշտություն, պարզ արտահայտել իրենց միտքը, հիմնավորել իրենց կարծիքը վեճի, դատողության ժամանակ, խոսելով ճիշտ գրքային լեզվով և պահպանելով վարքի նորմերը, տիրապետում են նաև կոլեկտիվ աշխատելու մեթոդներին, նրանց մոտ զարգանում է գնահատելու և ինքնագնահատելու կարողությունը:

Աշակերտներն այցելում և իրենք են մասնակցում տարբեր միջոցառումների, սովորում են, որ արվեստի ստեղծագործությունը (երաժշտական ստեղծագործություն) միշտ որոշակի գաղափար է արտահայտում:

3. Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում

Այս ուղղության շրջանակներում աշակերտները ծանոթանում են ունկնդրած ստեղծագործության մասին տեղեկությանը՝ վրացական (ժողովրդական և պրոֆեսիոնալ) և համաշխարհային երաժշտական մշակույթի հայտնի նմուշներին և կապում են դրանք մշակութային և պատմական համատեքստի հետ:

Այդ տեղեկությունը տարբեր ձևերով կապվում է ամենօրյա իրադարձությունների, իրենց փորձի հետ, դրանով իսկ դառնալով ավելի հետաքրքիր և ընդունելի: Աշակերտները ծանոթանում են վրացական և համաշխարհային երաժշտական մշակույթի ներկայացուցիչներին՝ երգահաններին և կատարողներին:

Աշակերտները ծանոթանում են նաև երաժշտական գործիքներին, դրանց միջև նմանություններին և տարբերություններին և տարբեր երաժշտական կոլեկտիվներին:

Ուսուցման տարրական և բազային աստիճաններում երաժշտության ուսումնական դասընթացի ամփոփիչ արդյունքներ

	Տարրական աստիճան	Բազային աստիճան
Գործնական կարողություններ և հմտություններ և գաղափարների արտահայտում	<p>Վեցամյակի ավարտին աշակերտը.</p> <p>օգտագործում է ձայն, երաժշտական գործիքներ, երաժշտության, պարի, դրամայի տարրեր ինքնաարտահայտման համար,</p> <p>համագործակցում է ուրիշների հետ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար,</p>	<p>Իննամյակի ավարտին աշակերտը.</p> <p>հետազոտում և ստեղծագործաբար օգտագործում է ձայն, երաժշտական գործիքներ, որոշակի սկզբունքներ և երաժշտական, պարարվեստի և դրամատիկական արվեստի արտահայտչական միջոցներ՝ ինքնաարտահայտման համար,</p> <p>դիմում է անհատական և խմբային աշխատանքների տարբեր ռազմավարությունների,</p>
Հաղորդակցություն և մեկնաբանություն	<p>հիմնվելով ստացած գիտելիքների վրա, արտահայտում և հիմնավորում է սեփական կարծիքը երաժշտական ստեղծագործության մասին,</p> <p>հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է մշակույթի ինքնաարտահայտման միջոց.</p>	<p>հիմնվելով ստացված գիտելիքների վրա՝ վերլուծում է երաժշտական արվեստի նմուշ, բացատրում է դրանցում արտահայտչական միջոցների օգտագործման նպատակը,</p> <p>գիտակցում է արվեստը՝ որպես աշխարհայացքի արտահայտման և հաղորդակցման միջոց,</p>
Երաժշտության ընկալում համատեքստում	<p>տարբերում է և քննարկում վրացական և համաշխարհային երաժշտական արվեստի հայտնի ստեղծագործություններ,</p> <p>ծանոթանում և ուսումնասիրում է արվեստի տարբեր ոլորտներ, դրանց կապերը և երաժշտական արվեստի տարբեր ներկայացուցիչների:</p>	<p>իրար է համեմատում տարբեր դարաշրջանների և ժանրերի ստեղծագործություններ և դատում է դրանց միջև գոյություն ունեցող նմանությունների և տարբերությունների մասին,</p> <p>ուսումնասիրում և հետազոտում է երաժշտական մշակույթն ու դրաներկայացուցիչներին, համեմատում և դատում է տարբեր ոճերի, հոսանքների, կատարման ձևի մասին:</p>

I դասարան
Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություններ և կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
<p>Աշակերտը Երաժշտ. I. գ.գ.1 Որոշում և օգտագործում է որոշ երաժշտական տարրեր ռիթմիկ-ինտոնացիոն վարժությունների ժամանակ:</p>	<p>Աշակերտը Երաժշտ. I. հ.մ.5 Լսում և արտահայտում է իր վերաբերմունքը երաժշտական ստեղծագործության հանդեպ:</p>	<p>Աշակերտը Երաժշտ. I. համ..9 Կապում է ունկնդրած երաժշտական ստեղծագործությունը առօրյալի հետ:</p>
<p>Երաժշտ. I. գ.գ.2 Երգում է մենակ և ուրիշների հետ միասին:</p>	<p>Երաժշտ. I. հ.մ.6 Գիտի և օգտագործում է տարրական երաժշտական տերմիններ:</p>	<p>Երաժշտ. I. համ.10 Ծանոթանում է որոշ երաժշտական նվագարանների:</p>
<p>Երաժշտ. I. գ.գ.3 Դիմում է արտահայտման տարրեր ձևերի՝ որոշակի տրամադրություն փոխանցելու համար:</p>	<p>Երաժշտ. I. հ.մ.7 Մասնակցում է տարբեր միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. I. համ. 11. Լսում և տարբերում է միջավայրի ձայները:</p>
<p>Երաժշտ. I. գ.գ.4 Կրկնում է մեկ կամ մի քանի պարերի պարզ շարժումներ:</p>	<p>Երաժշտ. I. հ.մ.8 Հարգանքով է վերաբերվում ուրիշների ստեղծագործությանը և կարծիքին:</p>	

Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. I. գ.գ.1 Աշակերտը որոշում և օգտագործում է որոշ երաժշտական տարրեր ռիթմիկ- ինտոնացիոն վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- շրջակա միջավայրում որոշում է երաժշտական և ոչ երաժշտական հնչյունները,
- տարբերում է ռիթմիկ և ոչ ռիթմիկ թակոցները,
- տարբերում է բարձր և ցածր հնչումը,
- ձայնը, գործիքը հնչեցնում է բարձր և ցածր,
- ձայնը, գործիքը հնչեցնում է շարունակաբար և ընդհատորեն, կարճ՝ ծափերով, թխթխկացնելով կրկնում է պարզ ռիթմ,
- երգելով մեկ տոնով՝ կրկնում է պարզ ռիթմ, փոխում է հնչյունի բարձրությունը:

Երաժշտ. I. 2 Աշակերտը երգում է մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգելով կրկնում է հնչյուններ, երաժշտական արտահայտություններ,
- լսելով երաժշտություն՝ ծափերով, երգելով ուղեկցում է նրան,
- ձայնով հետևում է ուսուցչին, նվագակցողի երգին,
- երգում է պարզ մենաձայն երգեր՝ նվագակցությամբ կամ ուսուցչի հետ դաշնաձայն,
- ձայնով հետևում է երգչախմբի հնչմանը,
- երգչախմբում երգում է պարզ միաձայն երգեր,
- ճիշտ է արձագանքում երգչախմբի ղեկավարի ցուցումներին (ցածր, բարձր...):

Երաժշտ. I.3 Աշակերտը դիմում է արտահայտման տարրեր ձևերի՝ որոշակի տրամադրություն փոխանցելու համար:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- դիմախաղի, ժեստի, ձայնի, շարժման, պարի տարրերի միջոցով արտահայտում է այս կամ այն տրամադրվածությունը,
- արտահայտում է նույն տրամադրվածությունը՝ գործիքին դիպչելով, աղմուկով, ծափերով,
- ուրիշների հետ միասին ներկայացնում է թատերական էտյուդներ:

Երաժշտ. I.4 Աշակերտը կրկնում է մեկ կամ մի քանի պարերի պարզագույն շարժումներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մարմնի շարժումով փոխանցում է երաժշտությամբ առաջացած հույզեր,
- ելման կետից կրկնում է մեկ կամ ավելի շարժումներ,
- պահպանում է մարմնի կորդինացիան (չի սայթաքում),
- ծափերով, ոտքի հարվածով առանձնացնում է ուժեղ բաժինը պարային ռիթմում:

Ուղղություն՝ հաղորդակցություն և մեկնաբանություն

Երաժշտ. I.5 Աշակերտը լսում և իր վերաբերմունքն է արտահայտում երաժշտական ստեղծագործության հանդեպ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- արտահայտում է դրական կամ բացասական վերաբերմունք ունկնդրած ստեղծագործության հանդեպ,
- առանձնացնում է ծանոթ և անծանոթ մեղեդիներ,
- կրկնակի ունկնդրման ժամանակ ծափերով, երգելով, պարելով ձայնակցում է երաժշտությանը,
- երաժշտությամբ առաջացած տրամադրվածությունը, հույզերը, փոխանցում է նկարով:

Երաժշտ. I.6 Աշակերտը գիտի և օգտագործում է տարրական երաժշտական տերմիններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- զրուցելիս ճիշտ է արտասանում սովորած տերմինները,
- անհրաժեշտության դեպքում պարզ բացատրում է դրանք,
- լսելով անծանոթ տերմին, բառ՝ հարց է տալիս դրանց նշանակությունը ճշտելու համար:

Երաժշտ. I.7 Սովորողը մասնակցում է տարբեր միջոցառումների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում է դասարանական տոների, թեմատիկ միջոցառումների՝ «Նոր տարի», «Գարուն», «Աշուն»:
- այցելում է տիկնիկային թատրոն, գնում է էքսկուրսիաների:

Երաժշտ. I.8 Աշակերտը հարգանքով է վերաբերվում ուրիշի ստեղծագործությանը և կարծիքին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- պահպանում է վարքի կանոններ, երբ ուրիշները երգում են կամ զրուցում (չի աղմկում),
- խնամքով է վերաբերվում ուրիշի ստեղծած նկարին (չի փչացնում):

Ուղղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում

Երաժշտ. I.9 Աշակերտը կապում է երաժշտական ստեղծագործությունը առօրյալի հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ճանաչում է մանկական երգերը,
- հիշում է, թե որտեղ և ինչ հանգամանքներում է լսել իր սիրած երաժշտական ստեղծագործությունները (երգերը),
- հարց է տալիս ունկնդրած հեքիաթի, երաժշտական ստեղծագործության մասին, ասքի վերաբերյալ և հիշում է մնանատիպ սյուժեներ, գործող անձանց,
- ծանոթ է երաժշտական ստեղծագործության հետ կապված դիդակտիկ նյութին և հիշում է սեփական տպավորությունները (լուսանկար, տեսաձայնագրություններ...)

Երաժշտ. I.10 Աշակերտը ծանոթանում է որոշ նվագարանների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- թվարկում է ծանոթ նվագարաններ,
- ճանաչում է դրանք ձևով,
- տարբերում է գործիքների հնչեղությունը:

Երաժշտ. I.11 Աշակերտը լսում է և տարբերում ձայները բնության մեջ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- տարբերում է հնչյունների առաջացման աղբյուրը (հեռախոսազանգ, ավտոմեքենայի արգելակներ..., թռչունների դայլայլ, տերևների խշխշոց...),
- որոշում է հնչյուններն ըստ տևողության (երկար, կարճ) և մնանակում է դրանք,
- արտահայտում է վերաբերմունք ձայնի նկատմամբ (դուր է գալիս, դուր չի գալիս):

I դասարանի ուսումնական ծրագրի բովանդակություն

Ռիթմիկ- ինտոնացիոն վարժություններ.

- երաժշտական տարրերի արտահայտում
- հնչյուն (կարճ-երկար-երաժշտական - ոչ երաժշտական...), հնչման ուժ (բարձր, ցածր), ռիթմ (պարզ ռիթմիկ պատկեր՝ կազմված կես քառորդային և ութերորդական տևողություններից)...

Երգեցողություն.

- պարզ մենաձայն երգեր մանկական և ժողովրդական երգացանկից,
- երգելը երաժշտական ուղեկցությամբ:

Պար.

- վրացական և պատմա-կենցաղային պարեր,
- մեկ կամ ավելի պարզ շարժումների կրկնություն:

Տրամադրվածության փոխանցում.

- ուրախություն, տխրություն, վախ, բարկություն և դիմախաղով, ժեստով, շարժումով, ձայնով:

Նյութ ունկնդրման համար.

- ժողովրդական երգեր,
- դրվագներ դասական ստեղծագործություններից,
- մանկական ծրագրային պիեսներ:

Հնչյունի առաջացման աղբյուրի որոշում.

- տուն, բնություն, փողոց...

Միջոցառումներ.

- դասարանական տոն՝ «Նոր տարի», «Գարուն», «Աշուն» թեմաներով:

Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում.

- տեղեկություն. երգերի տեքստ, սյուժե:

Երաժշտական գործիքներ.

- ժողովրդական և դասական գործիքների (դաշնամուր, կիթառ, շակ, թմբուկ, շվի...) տեսներով և հնչումով ճանաչում:

II դասարան
Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություն-կարողություն և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. II. 1 Որոշում և օգտագործում է որոշ երաժշտական տարրեր ռիթմիկ-ինտոնացիոն վարժությունների ժամանակ:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. II.5 Լսում և արտահայտում է իր վերաբերմունքը երաժշտական ստեղծագործության վերաբերյալ:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. II.10 Ծանոթ է տարբեր ստեղծագործական մասնագիտությունների և կապում է դրանք արվեստի կոնկրետ նմուշների հետ:</p>
<p>Երաժշտ. II.2 Երգում է մենակ կամ ուրիշների հետ միասին:</p>	<p>Երաժշտ. II.6 Գիտի և օգտագործում է տարրական երաժշտական տերմիններ:</p>	<p>Երաժշտ. II.11. Կապում է ունկնդրած ստեղծագործությունները առօրյայի հետ:</p>
<p>Երաժշտ. II.3 Գիմում է արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրվածություն փոխանցելու համար:</p>	<p>Երաժշտ. II.7 Մասնակցում է տարբեր միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. II.12. Ծանոթ է որոշ նվագարանների:</p>
<p>Երաժշտ. II.4 Կրկնում է որոշ պարերի պարզ շարժումներ:</p>	<p>Երաժշտ. II.8 Հարգանքով է վերաբերվում ուրիշի ստեղծագործությանն ու կարծիքին:</p>	<p>Երաժշտ. II.13. Միջավայրում լսում է և տարբերում ձայները:</p>
	<p>Երաժշտ. II.9 Հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է զգացմունքների և տրամադրությունների արտահայտման միջոց:</p>	

Ուղղություն. գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. II. 1 Աշակերտը որոշում և օգտագործում է որոշ երաժշտական տարրեր ռիթմիկ-ինտոնացիոն վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- տարբերում է արագ և դանդաղ տեմպեր,
- ծափերով, թխկթխկացումով կրկնում է պարզ ռիթմ,
- մեկ տոնով երգելով՝ կրկնում է պարզ ռիթմ, փոխում է հնչյունի բարձրությունը, տեմպը (դանդաղ, արագ),
- բնութագրում է պարզ երաժշտական դրվագ՝ տեմպով, հնչման ուժով,
- համադասարանցիների հետ միասին ուղեկցում է երաժշտությանը. նվագում է ռիթմեր՝ խաղալիք գործիքներից և տարբեր առարկաներից կազմված «համույթում», «նվագախմբում»:

Երաժշտ. I.2 Աշակերտը երգում է մենակ և մյուսների հետ միասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգելով կրկնում է երաժշտական արտահայտություններ,
- լսելով երաժշտություն, ծափերով, երգելով ձայնակցում է դրան,
- ձայնով հետևում է երգչախմբի հնչմանը,
- փոխարինում է համադասարանցիներին՝ առանձին երգային արտահայտություններ կատարելիս,
- երգում է երգչախմբում հանրաճանաչ մեղեդիներ և մենաձայն երգեր, բազմաձայն երգի ձայներից մեկը,
- արձագանքում է երգչախմբի ղեկավարի ցուցումներին (ցածր, բարձր, դանդաղ, արագ, միասին, սկզբից...):

Երաժշտ. II. 3 Աշակերտը դիմում է արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն փոխանցելու համար:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- դիմախաղի, ժեստի, ձայնի, շարժման, պարի միջոցով արտահայտում է այս կամ այն տրամադրությունը,
- արտահայտում է նույն տրամադրվածությունը՝ գործիքին դիպչելով, աղմուկով, ծափերով, նկարի օգնությամբ,

- ուրիշների հետ միասին ներկայացնում է փոքր թատերական էտյուդներ՝ կոնկրետ տրամադրության, սյուժեի հետ կապի մեջ:

Երաժշտ. II. 4 Աշակերտը կրկնում է որոշ պարերի պարզ շարժումներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ելման դիրքից կրկնում է մեկ-երկու տարրական շարժումներ,
- պահպանում է մարմնի կորդինացիան,
- մարմնի շարժումներով արտահայտում է երաժշտությամբ առաջացած հույզերը,
- արտահայտում է երաժշտական չափսը՝ ոտքի հարվածով, ծափով,
- լսելով երաժշտություն՝ ճանաչում է պարերը:

Ուղղություն. հաղորդակցություն և մեկնություն

Երաժշտ. II. 5 Աշակերտը լսում և արտահայտում է իր վերաբերմունքը երաժշտական ստեղծագործության հանդեպ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- արտահայտում է դրական կամ բացասական վերաբերմունք՝ ունկնդրած ստեղծագործության հանդեպ,
- կրկնում է երաժշտական տոնայնություն, պարզ ռիթմիկ պատկեր,
- իրարից տարբերում է ծանոթ և անծանոթ մեղեդիներ, ծանոթ և անծանոթ թեմաներ,
- կրկնակի ունկնդրման ժամանակ ծափերով, երգելով, պարով ձայնակցում է երաժշտությանը, «դիրիժորություն է անում» ունկնդրման ժամանակ,
- բնութագրում է կոնկրետ երաժշտական դրվագ՝ ըստ տեմպի, հնչման ուժի,
- երաժշտությամբ առաջացած տրամադրությունը, հույզերը փոխանցում է նկարով:

Երաժշտ. II. 6 Աշակերտը գիտի և օգտագործում է տարրական երաժշտական տերմիններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- զրուցելիս ճիշտ է օգտագործում սովորած տերմինները,
- անհրաժեշտության դեպքում պարզ բացատրում է դրանք,
- հարցեր է տալիս իրեն՝ անծանոթ նվագարանի, հասկացության անվանումը ճշտելու նպատակով:

Երաժշտ. II. 7 Աշակերտը մասնակցում է տարբեր միջոցառումների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում է դասարանական տոների, թեմատիկ միջոցառումների՝ «Նոր տարի», «Գարուն», «Աշուն» ...
- ներկա է դպրոցական հաշվետու համերգին:

Երաժշտ. II. 8 Աշակերտը հարգանքով է վերաբերվում ուրիշի ստեղծագործությանը և կարծիքին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- պահպանում է վարքի նորմեր, երբ ուրիշները երգում, զրուցում են (չի աղմկում, չի ծաղրում),
- խնամքով է վերաբերվում ուրիշի ստեղծած նկարին (չի փչացնում),
- հաշվի է առնում իր՝ սեփական կարծիքից տարբերվող, ուրիշի կարծիք:

Երաժշտ. II. 9 Աշակերտը հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է զգացմունքների և տրամադրությունների արտահայտման միջոց:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- խոսում է ունկնդրած երաժշտությունից ստացած տպավորությունների մասին,
- կապում է երաժշտական դրվագի տեմպը, ռիթմը կոնկրետ տրամադրության հետ,
- երգելով արտահայտում է իր զգացմունքները, վերաբերմունքը որևէ երևույթի հանդեպ:
- որոշում է համադասարանցիների կողմից երգով փոխանցվող տրամադրություն, զգացմունք:

Երաժշտ. II. 10 Աշակերտը ծանոթ է տարբեր ստեղծագործական մասնագիտությունների և կապում է դրանք արվեստի կոնկրետ մուշների հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- տարբերում է երգահանի, նկարչի, քանդակագործի, բանաստեղծի, գրողի մասնագիտությունները և թվում է նրանց հետ կապված մեկ կամ ավել ստեղծագործություն,
- իր շրջապատում ճանաչում է արվեստի ստեղծագործությունները,

- արվեստի ստեղծագործության դիտումից, ունկնդրումից հետո անվանում է հեղինակի մասնագիտությունը:

Երաժշտ. II. 11 Աշակերտը կապում է ունկնդրած ստեղծագործություններն առօրյայի հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- հիշում է որտեղ, ինչ պայմաններում է լսել իր սիրած երաժշտական ստեղծագործությունները (երգերը) և պատասխանում է դրանց տեքստերի հետ կապված հարցերին,
- շարադրում է երաժշտական ստեղծագործության հետ կապված ասքի, պատմության բովանդակությունը և պատասխանում է հարցերին,
- հիշում է, թե որ հերոսին է հիշեցնում իրեն տվյալ երաժշտական ստեղծագործության գործող անձը,
- ծանոթ է երաժշտական ստեղծագործության հետ կապված դիդակտիկ նյութին (լուսանկար, տեսաձայնագրություններ...) և հիշում է սեփական տպավորությունները:

Երաժշտ. I. 12 Աշակերտը ծանոթ է որոշ երաժշտական գործիքների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը

- ճանաչում է ձևով,
- ճանաչում է մենակատարման հնչման ժամանակ,
- շարժումներով ցույց է տալիս դրանց նվագելը:

Երաժշտ. I. 13 Աշակերտը ճանաչում և տարբերում է հնչյուններ շրջակա միջավայրում:

Արդյունքն ակներև է, եթե սովորողը.

- տարբերում է բնական և արհեստական հնչյուններ,
- ճիշտ է որոշում յուրաքանչյուր հնչյուն (ծվլոց, սուլոց, կարկաչ):

II դասարանի ուսումնական ծրագրի բովանդակություն

Ռիթմիկ- ինտոնացիոն վարժություններ.

- երաժշտական տարրերի արտահայտում,
- հնչյուն, հնչյունի ուժ, ռիթմ (կես և քառորդ չափից կազմված ռիթմիկ պատկեր), տեմպ (դանդաղ - արագ):

Երգեցողություն.

- մենաձայն երգեր մանկական և ժողովրդական երգացանկից,
- երգելը նվագակցությամբ և առանց դրա:

Պար.

- վրացական և պատմա-կենցաղային պարեր,
- մի քանի պարզ շարժումների կրկնություն:

Տրամադրությունների փոխանցում.

- դիմախաղով, ժեստով, շարժումով,
- էտյուդների կատարմամբ:

Նյութ ունկնդրման համար.

- ժողովրդական երգեր,
- դրվագներ կլասիցիզմի դարաշրջանի վրացական դասական ստեղծագործություններից,
- մանկական ծրագրային պիեսներ, բնորոշ դրվագներ հայտնի երաժշտական ստեղծագործություններից:

Հնչյունի առաջացման աղբյուրի որոշում.

- տուն, բնություն, փողոց, համերգային դահլիճ:

Միջոցառումներ.

- դասարանական տոն «Նոր տարի», «Գարուն» , «Աշուն» թեմաներով,
- դպրոցական հաշվետու համերգ:

Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում.

- տեղեկություն. տեքստ, սյուժե,
- տրամադրության որոշում,
- ծանոթություն ստեղծագործական մասնագիտությունների հետ (նկարիչ, երգահան, բանաստեղծ...) և դրանց կապումը կոնկրետ մարդկանց հետ:

Երաժշտական գործիքներ.

- ժողովրդական և դասական գործիքների ճանաչում (ջութակ, քսիլոֆոն, փանդուրի...) լուսանկարների վրա և դասարանում:

III դասարանի չափորոշի
Տարվա վերջին հասանելի արդյունքները

Գործնական հմտություն-կարողությունների և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Աշակերտը Երաժշտ. III.1. ճանաչում և կիրառում է մի քանի երաժշտական տարրեր, չափահանչերանգային վարժությունների ժամանակ:</p>	<p>Աշակերտը Երաժշտ. III.8. Ունկնդրում և իր վերաբերմունքն է արտահայտում երաժշտական երկի նկատմամբ:</p>	<p>Աշակերտը Երաժշտ. III.13. Ծանոթ է արվեստի տարրեր բնագավառների և արվեստի հետ առնչվող մասնագիտությունների:</p>
<p>Երաժշտ. III.2. Երգում է մենակ և մյուսների հետ համաձայնաբար:</p>	<p>Երաժշտ. III.9. Օգտագործում է երաժշտական տերմիններ:</p>	<p>Երաժշտ. III.14. Ունկնդրած ստեղծագործությունները կապում է սեփական փորձի հետ:</p>
<p>Երաժշտ. III.3. Դիմում է արտահայտման տարրեր ձևերի, որոշակի տրամադրություն հաղորդելու համար:</p>	<p>Երաժշտ. III.10. Մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. III.15. Տարբերում է երաժշտական նվագարանները:</p>
<p>Երաժշտ. III.4. Կրկնում է որոշ պարերի պարզ պարաձևեր:</p>	<p>Երաժշտ. III.11. Հարգանքով է վերաբերում ուրիշի ստեղծագործության և կարծիքի հանդեպ:</p>	
<p>Երաժշտ. III. 5. ճանաչում է նոտային համակարգի որոշ խորհրդանշաններ:</p>	<p>Երաժշտ. III.12. Հասկանում է և ցույց տալիս, որ արվեստը՝ մտահղացումների վերարտադրման միջոց է:</p>	
<p>Երաժշտ. III.6. Կազմակերպում է իր ուսումնական գործունեությունը:</p>		
<p>Երաժշտ. III.7. Մշակած ունի խմբային աշխատանքի հմտություն-կարողություններ:</p>		

Ուղղությունը. գործնական հմտություն-կարողությունների և գաղափարների արտահայտում

Երաժշտ. III.1. Աշակերտը ճանաչում է և կիրառում է մի քանի երաժշտական տարրեր՝ չափա-հնչերանգային վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է երաժշտական հնչյունի տևողությունը՝ երկար և կարճ ծափի միջոցով:
- Տարբերում է ռեգիստրները (երաժշտական նվագարան կամ մարդկային ձայնի դիապազոնի հատված)՝ տարբեր բարձրությամբ հնչած երաժշտական հատվածը ունկնդրելիս (բարձր-ցածր):
- Բնութագրում է կոնկրետ երաժշտական հատվածը՝ տեմպի, հնչեղության, ուժգնության համաձայն:
- Տարբերում է երկմաս և եռամաս մետրը՝ պարի, շարժումների օգնությամբ (վալս, պոլկա) :
- Երգելիս, երաժշտությունն ունկնդրելիս, առանձնացնում է շեշտադրություններով ուժեղ ժամանակը:
- Դասընկերների հետ մեկտեղ ուղեկցում է երաժշտությանը, նվագում տարբեր հանգեր՝ երաժշտական նվագարանների և առօրյա օգտագործման առարկաներից կազմված «համույթում», «նվագախմբում»:

Երաժշտ. III.2. Աշակերտը երգում է մենակ և մյուսների հետ համաձայնաբար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Երգելով կրկնում է երաժշտական հատվածներ, մեղեդիներ:
- Չայնակցում է երգչախմբի հնչեղությանը:
- Երգում է երգչախմբում՝ հանրահայտ մեղեդիներ, միաձայն և պարզ երկձայն երգեր:
- Կատարում է բազմաձայն երգի մեկ ձայնը՝ միալար բասի ֆոնի վրա:
- Երգում է պարզ երգեր այն օտար լեզվով, որը ուսանում է:
- Ճիշտ է արձագանքում դիրիժորական շարժումներին:

Երաժշտ. III.3. Աշակերտը դիմում է արտահայտման տարբեր ձևերի, որոշակի տրամադրություն հաղորդելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը

- Մյուսների հետ մեկտեղ խաղարկում է քատերական էտյուդներ՝ կոնկրետ տրամադրության, սյուժեի, գործող անձի հետ կապի մեջ:

- Գործող անձի բնավորությունը հաղորդում է դիմախոսությամբ, ռեպլիկով, երաժշտական հատվածով:
- Բեմին համապատասխան, փոխում է արտաքին տեսքը, հարմարեցնում կոստյումը:

Երաժշտ. III.4. Աշակերտը կրկնում է որոշ պարերի պարզ շարժումներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտահայտում է երաժշտության ռիթմը՝ ոտքի զարկով, ծափով:
- Սկզբնական դիրքից կրկնում է մի քանի պարաձև:
- Կրկնում է պարի ընդհանուր ուրվագծի հատվածը:
- Պահպանում է մարմնի կոորդինացիան:

Երաժշտ. III.5. Աշակերտը կռահում է նոտային համակարգի որոշ խորհրդանիշներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում և նկարում է ջութակի բանալին:
- Տարբերում և անվանում է նոտային համակարգի տոները:
- Կռահում և անվանում է ձայնաստիճանները, առաջին օկտավայի (ութնյակի) շրջանակներում:

Երաժշտ. III.6. Աշակերտը կազմակերպում է սեփական ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դասի համար բերում է անհրաժեշտ իրեր:
- Ակտիվորեն ընդգրկված է դասի ընթացքին:
- Մասնակցում է հարցման:
- Առաջադրում է հարցեր:
- Գրում է առաջադրանքը:

Երաժշտ. III.7. Աշակերտը մշակած ունի խմբային աշխատանքի հմտություն-կարողություն:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աշխատում է անհատականորեն և մյուսների հետ մեկտեղ:
- Օգնում է դասընկերներին:
- Ունկնդրում է տարբերվող կարծիքը:

- Պատրաստվում է խմբային ներկայացման:
- Դասընկերների առջև ներկայանալիս՝ պահպանում է որոշակի հետևողականություն:

Ուղղությունը՝ հաղորդակցություն և մեկնաբանություն

Երաժշտ. III.8. Աշակերտն ունկնդրում և իր վերաբերմունքն է արտահայտում երաժշտական երկի նկատմամբ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում և անվանում է ծանոթ մեղեդին, երաժշտական թեման:
- Կրկնական ունկնդրման ժամանակ ծափով, երգելով, պարելով միանում է երաժշտությանը:
- Բնութագրում է կոնկրետ երաժշտական հատվածները, ըստ տեմպի, հնչեղության ուժգնության, մետրի (երաժշտության ռիթմի կազմակերպման համակարգը):
- Տարբերում է վոկալ, գործիքային, վոկալ-գործիքային երկերը:
- Կրկնում է երաժշտական թեման իր տարբերակներով, մեղեդին, բնորոշ հանգերը:
- «Դիրիժորում է» ունկնդրածը:
- Երաժշտությամբ հարուցված տրամադրությունը, հույզերը վերարտադրում է նկարում:

Երաժշտ. III.9. Աշակերտն օգտագործում է երաժշտական տերմիններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ջրույցի ժամանակ ճիշտ է արտասանում սովորած տերմինները:
- Անհրաժեշտության դեպքում ուղղակի բացատրում է դրանք:
- Օտար տերմիններ, բառեր լսելիս, առաջադրում է հարցեր՝ դրանց նշանակությունը ճշտելու համար:

Երաժշտ. III.10. Աշակերտը մասնակցում է տարբեր բնույթի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանական տոների, թեմատիկ միջոցառումների՝ Նոր տարի, Գարուն, Աշուն...
- Մասնակցում և ներկա է գտնվում դպրոցի հաշվետու համերգին:
- Մասնակցում է էքսկուրսիաների:
- Լսարանի առջև ներկայանում է կատարողի դերում:

Երաժշտ. III.11. Աշակերտը հարգանքով է վերաբերում ուրիշի ստեղծագործությանը և կարծիքին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դրական է գնահատում դասընկերների կողմից դրսևորված ցանկացած կարողություն՝ երգելը, պարելը, նկարելը, ռիթմական զգացողությունը, գրելու կարողությունը...
- Սպասում է ուրիշի պատասխանի ավարտին:
- Կռռելու է, կարծիքը արտահայտելու ժամանակ:

Երաժշտ. III.12. Աշակերտը գիտակցում և բացահայտում է, որ արվեստը՝ գաղափարների արտահայտման միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ջրուցում է այն մասին, թե ինչ տրամադրություն է ստեղծում իր մոտ այս կամ այն երաժշտական երկը:
- Երաժշտական նվագարանի հնչերանգը կապում է կոնկրետ տրամադրության հետ:
- Ծանոթ մեղեդու, երգի կատարման ժամանակ փոխում է արտահայտչական միջոցները՝ տրամադրությանը համապատասխան:

Ուղղությունը՝ երաժշտական երկի ընկալումը համատեքստում

Երաժշտ. III.13. Աշակերտը ծանոթ է արվեստի տարբեր բնագավառների և արվեստի հետ կապված մասնագիտությունների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է արվեստի տարբեր բնագավառները՝ երաժշտությունը, գեղանկարչությունը, քանդակագործությունը, պարը, պոեզիան:
- Արվեստի բնագավառների հետ կապում է համապատասխան մասնագիտություններ և նկարագրում դրանց գործունեությունը:
- Անվանում է արվեստի այս կամ այն բնագավառի երկու կամ ավելի նմուշներ և այս բնագավառը պատկերող միջոցներ, նյութեր:
- Անվանում և բնութագրում է իրեն ծանոթ երաժշտական-արտահայտչականության միջոցները:

Երաժշտ. III.14. Աշակերտը ունկնդրած երգերը կապում է սեփական փորձի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Առաջադրում է ունկնդրած ստեղծագործությունների հետ կապված հարցեր:

2009

- Ջուգահեռներ է անցկացնում ընթերցած, դիտած, ունկնդրած երկերի միջև:
- Երաժշտական ստեղծագործությունների սյուժեն, տեքստը կապում է ամենօրյա իրադարձությունների հետ (ճանապարհորդություն, հեքիաթ...):

Երաժշտ. III.15. Աշակերտը տարբերում է երաժշտական նվագարանները:
Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է նվագարանները՝ սուր հնչեղության ժամանակ:
- Տարբերում է նվագարանները՝ նյութի համաձայն:
- Նկարում է երաժշտական նվագարանը կամ դրա որևէ մասը:

III դասարանի ուսումնական ծրագրի բովանդակությունը Չափա-հնչերանգային վարժություններ.

- Երաժշտական տարրերի արտահայտումը:
- Հնչյուն, հնչեղության ուժգնություն, ռիթմ, տեմպ, մետր (երկմաս և եռամաս), ռեգիստր (բարձր-ցածր):

Երգ.

- Միաձայն և պարզ երկձայն (միալար բասով, տերցիական կարգով) երգեր:
- Մանկական, ժողովրդական երգեր, մեղեդիներ՝ հանրահայտ ստեղծագործություններից:
- Նվագակցությամբ և առանց դրա:

Պար.

- Վրացական և պատմա-կենցաղային պարեր:
- Պարային հատվածների կատարում:
- Պար՝ զուգընկերոջ հետ և համույթում:

Ունկնդրվելիք նյութ.

- Ժողովրդական երգեր:
- Հատվածներ՝ բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի վրացական դասական ստեղծագործություններից:
- Մանկական երաժշտական ծրագրային պիեսներ, բնահատուկ հատվածներ՝ հայտնի երաժշտական երկերից:

Տրամադրվածության հաղորդում.

- Հույզերի վերարտադրում:
- Պարզ տեսարանների խաղարկում:

Նոտային համակարգ.

- Ջութակի բանալի:
- Նոտաները՝ առաջին օկտավա:

Աշխատելու ձևեր.

- Անհատական, զույգերով և խմբային:

Միջոցառումներ.

- Դասարանային տոնահանդես:
- Դպրոցական հաշվետու համերգ:

Երաժշտական երկի ընկալումը համատեքստում.

- Տեղեկություններ. ստեղծման պատմությունը, սյուժեն...
- Տրամադրվածության բացահայտումը, զրույց՝ տպավորությունների մասին:
- Արվեստի բնագավառներին ծանոթացում. երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, պոեզիա, գրականություն... Այս բնագավառների կոնկրետ մասնագիտությունների, մարդկանց հետ առնչություն:

Նվագարաններ.

- Ժողովրդական և դասական երաժշտական գործիքները ճանաչել (սրինգ, տավիդ, պարկապուկ...) ձևով և հնչողությամբ:

IV դասարան
Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքները

Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
Երաժշտ. IV.1. Աշակերտը ճանաչում և կիրառում է մի քանի երաժշտական տարրեր, չափահանչերանգային վարժությունների ժամանակ:	Երաժշտ. IV.9. Աշակերտն ունկնդրում և իր վերաբերմունքն է արտահայտում երաժշտական երկի նկատմամբ:	Երաժշտ. IV.13. Աշակերտը տարբերում է երաժիշտների մասնագիտությունները և դրանք համեմատում է միմյանց հետ:
Երաժշտ. IV.2. Աշակերտը երգում է մենակ և մյուսների հետ համաձայնաբար:	Երաժշտ. IV.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:	Երաժշտ. IV.14. Աշակերտը քննարկում է ունկնդրած ստեղծագործությունները:
Երաժշտ. IV.3. Աշակերտը որոշում է և հաղորդում իրեն հետաքրքիր տրամադրվածություն, սյուժե, թեմա:	Երաժշտ. IV.11. Աշակերտը մշակութային միջոցառումների մասնակցելիս պահպանում է վարվելաձևի կանոնները:	Երաժշտ. IV.15. Աշակերտը տարբերում է երաժշտական նվագարանները:
Երաժշտ. IV.4. Աշակերտը կատարում է որոշ պարերի պարզ պարաձևեր:	Երաժշտ. IV.12. Աշակերտը հասկանում է և ցույց տալիս, որ արվեստը զգացմունքների և մտահղացումների վերարտադրման միջոց է:	
Երաժշտ. IV.5. Աշակերտը ճանաչում է և գրի առնում նոտային համակարգի որոշ խորհրդանշաններ:		
Երաժշտ. IV.6. Աշակերտը կազմակերպում է իր ուսումնական գործունեությունը:		
Երաժշտ. IV.7. Աշակերտն աշխատում է խմբում:		
Երաժշտ. IV.8. Աշակերտը կազմակերպում է դասարանական միջոցառումներ:		

IV դասարան

Տարվա վերջին ձեռքերվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղությունը. գործնական հմտություն-կարողությունների և գաղափարների արտահայտում

Երաժշտ. IV. 1. Աշակերտը կիրառում է մի քանի երաժշտական տարրեր՝ չափահանչերանգային վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է երկմաս և եռամաս մետրը՝ պարի, շարժումների օգնությամբ (վալս, պոլկա):
- Երգելիս, երաժշտությունն ունկնդրելիս, առանձնացնում է շեշտադրություններով ուժեղ ժամանակը:
- Պարզ ռիթմիկ պատկերն արտահայտում է բարդացված ձևով:
- Համադասարանցիների կողմից կապակցված տոնին, պարզ ռիթմիկ պատկերին համապատասխանեցնում է իր կամ այլ (նվագարան, թխկթխկոց ...) ձայն, երաժշտական հանգ, ռիթմիկ պատկեր:
- Երաժշտական հանգը հնչեցնում է մաժորում և մինորում:
- Ձեռքի տակ եղած նվագարանների կամ այլ առարկաների միջոցով դասընկերների հետ ստեղծում է «համույթ», «նվագախումբ» և ձայնակցում է երաժշտությանը:
- Երաժշտական տարրերն արտահայտում է հակադրված՝ ծանոթ երաժշտությունը երգում է դանդաղ - արագ (տեմպ), ցածրաձայն-բարձրաձայն (հնչեղություն), տարբեր տոնայնություններում:

Երաժշտ. IV. 2. Աշակերտը երգում է մենակ և մյուսների հետ համաձայնաբար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Երգում է ինտերվալները համադասարանցիների հետ:
- Երգում է զույգով կամ երգչախմբում մեկ կամ երկձայն երգեր:
- Երգում է պարզ երգեր այն օտար լեզվով, որը ուսանում է:
- Գիտակցում է երգի տեքստը:
- Զգում է երգչախմբի ամբողջականությունը և չի խախտում նրա հնչեղությունը:

Երաժշտ. IV. 3. Աշակերտը որոշում է և հաղորդում իրեն հետաքրքիր տրամադրվածություն, սյուժե, թեմա:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Մյուսների հետ մեկտեղ խաղարկում է պարզ տեսարաններ կոնկրետ

երաժշտական ստեղծագործության, հատվածի տրամադրվածությունը ցույց տալու նպատակով:

- Մյուսների հետ մեկտեղ խաղարկում է պարզ տեսարաններ կոնկրետ սյուժեի համաձայն, կոնկրետ հերոսի մասնակցությամբ:
- Մնջախաղով արտահայտում է որոշակի տրամադրվածություն:
- Ենթադրություն է արտահայտում համադասարանցու կողմից արտահայտված տրամադրվածության վերաբերյալ:
- Շարադրում է տեսարանին, հերոսին համապատասխան տեքստ, համապատասխանեցնում է երգ:
- Հերոսի բնավորությունը հաղորդում է ձայնի երանգով, շարժումով:

Երաժշտ.IV.4. Աշակերտը կատարում է մի քանի պարերի պարզ պարաձևեր:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Կրկնում է պարի ընդհանուր գծագիրը կամ նրա մի հատված:
- Պարում է զույգով, համույթում:
- Չույգով պարելիս պահպանում է հեռավորությունը:

Երաժշտ.IV.5. Աշակերտը ճանաչում է և գրի առնում նոտային համակարգի որոշ խորհրդանշաններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է և գրում նոտաները ջութակի բանալիում:
- Տարբերում է և գրի առնում տևողությունները, դադարները:
- Ծափով արտահայտում է պարզ ռիթմ:

Երաժշտ.IV.6. Աշակերտը կազմակերպում է իր ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Բերում է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ իրեր,
- Գրի է առնում հանձնարարությունը:
- Ակտիվորեն ընդգրկված է դասի ընթացքին:
- Մասնակցում է հարցմանը:
- Հարցեր է առաջադրում:
- Կռռելկտ է ուսումնական գործունեության ժամանակ (չի հուշում կամ չի արտագրում համադասարանցուց):

Երաժշտ. IV.7. Աշակերտն աշխատում է խմբում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Աշխատում է անհատականորեն կամ ուրիշների հետ:
- Ականջ է դնում տարբերվող կարծիքը:
- Մասնակցում է խմբային աշխատանքի:

Երաժշտ. IV.8. Աշակերտը կազմակերպում է դասարանական միջոցառումներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ներկայացման համար բեմիքեր է գտնում:
- Մասնակցում է միջոցառման համար անհրաժեշտ ռեսուրս (ազդագիր, հրավիրատոմս, կոստյում ...) ստեղծելուն:
- Գովազդում է միջոցառումը (խրատում է աշակերտներին):
- Ակտիվ է փորձերի ժամանակ:

Ուղղություն՝ հաղորդակցություն և մեկնաբանություն

Երաժշտ. IV.9. Աշակերտն ունկնդրում և իր վերաբերմունքն է արտահայտում երաժշտական երկի նկատմամբ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Երաժշտություն ունկնդրելու ժամանակ կատարում է տարբեր տեսակի հանձնարարություններ՝ նշում է անձանոթ նվագարանի կամ վոկալի մուտքը:
- Ճանաչում է արդեն լսած ստեղծագործության հատվածներ:
- Բնութագրում է կոնկրետ երաժշտակլան հատվածը՝ տեմպի, հնչեղության ուժգնության, մետրի, նվագարանների տեմբրի համաձայն:
- Ընդհանուր բնութագրում է կատարողների կազմը:
- Խոսելիս օգտագործում է սովորած տերմինները:
- Ունկնդրած ստեղծագործության համար ընտրում է առաջադրված վերնագրերից մեկը:

Երաժշտ. IV.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Մասնակցում է դասարանական ներկայացմանը, դիմակահանդեսին:
- Մասնակցում է և ներկա գտնվում դպրոցական հաշվետու համերգին:

- Մասնակցում է վիկտորինայի:
- Լսարանի առջև ներկայանում է կատարողի, ստեղծագործողի և համերգավարի դերով:

Երաժշտ.IV.11. Աշակերտը մշակութային միջոցառումների մասնակցելիս պահպանում է վարվելաձևի կանոնները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ներկայացման, համերգի, կինոֆիլմի ընթացքում, ցուցահանդեսին, թանգարանում վարվում է ընդունված նորմերի համաձայն:
- Ընդունված կանոնների համաձայն՝ արտահայտում է իր վերաբերմունքը ստեղծագործության ավարտից հետո:
- Քննարկման, դատողությունների ժամանակ սպասում է մինչև դիմացինն ավարտի իր միտքը:

Երաժշտ.IV.12. Աշակերտը հասկանում է և ցույց տալիս, որ արվեստը զգացմունքների և մտահղացումների վերարտադրման միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ջրուցում է այն մասին, թե ինչ տրամադրվածություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը:
- Դատողություն է անում այն մասին, թե ինչ կարելի է արտահայտել մեղեդու, տարբեր արտահայտչականության միջոցներով:
- Թվարկում է մի քանի պատճառ, ինչի համար մարդիկ ստեղծում են արվեստի ստեղծագործությունները:

Ուղղություն՝ երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում:

Երաժշտ.IV.13. Աշակերտը տարբերում է երաժիշտների մասնագիտությունները և դրանք համեմատում է միմյանց հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է, թե ով է ստեղծում և ով կատարում երաժշտությունը:
- Անվանում է երգահանի, դաշնակահարի, դիրիժորի, երգչի և այլ մասնագիտություններ և նկարագրում է դրանք:
- Մտաբերում է, թե որ մասնագիտության երաժիշտ է տեսել և լսել:

Երաժշտ.IV.14. Աշակերտը քննարկում է ունկնդրած ստեղծագործությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Բնութագրում է ունկնդրած ստեղծագործությունները՝ տրամադրվածության համաձայն:
- Տարբերում է ներկայացումները (բալետային, օպերային, դրամատիկական):
- Տարբերում է դասական և ժողովրդական երաժշտական ստեղծագործությունները:
- Հարցեր է առաջադրում և պատասխանում է հարցերի՝ կապված երաժշտական ստեղծագործության բովանդակության, հեղինակի, ժանրի հետ:

Երաժշտ.IV.15. Աշակերտը տարբերում է երաժշտական նվագարանները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է ժողովրդական և դասական նվագախմբի նվագարանները:
- Որոշում է նվագարանները մենակատարման և համույթում մասնակցության ժամանակ:
- Առանձնացնում է և անվանում նվագարանի առանձին մասեր (լար, ստեղն ...):
- Հիմնավորում է իր վերաբերմունքը այն գործիքների նկատմամբ, որոնք տարբերել է այլ նվագարաններից (հավանում եմ նրա վրա կատարման տեմբրը, ձևը):
- Նկարում է երաժշտական նվագարաններ:

Ծրագրի բովանդակությունը

Չափա-հնչերանգային վարժություններ.

- Երաժշտական տարրերի արտահայտումը:
- Հնչյուն, հնչեղության ուժգնություն, ռիթմ, տեմպ, մետր (երկմաս և եռամաս), ռեգիստր (բարձր-ցածր), տեմբր (գործիքային, վոկալ), մաժոր, մինոր ...

Երգ.

- Միաձայն և պարզ երկձայն երգեր մանկական, ժողովրդական երգացանկից, մեղեդիներ հանրահայտ ստեղծագործություններից:
- Նվագակցությամբ և առանց դրա:

Պար.

- Վրացական և պատմա-կենցաղային պարեր:
- Պարային ընդհանուր գծագրի կատարում:
- Պար՝ զուգընկերոջ հետ և համույթում:

Տրամադրվածության հաղորդում.

- Մնջախաղ
- Կոմպոզիցիա (տեսարանների խաղարկում)
- Ներկայացում

Նոտային համակարգ.

- Նոտաները ճանաչել և գրի առնել ջութակի բանալիում,
- Կարդալ նոտաները և դադարները և գրի առնել, պարզ ռիթմիկ գծագիրն արտահայտել ծափով:

Ունկնդրվելիք նյութ.

- Ժողովրդական երգեր:
- Դրվագներ բարոկկոյի, դասական, ռոմանտիզմի դարաշրջանի, վրաց երգահանների ստեղծագործություններից:

Աշխատելու ձևերը.

- Անհատական, զույգերով կամ խմբային:

Միջոցառումներ.

- Դպրոցական հաշվետու համերգ:
- Դասարանական ներկայացում:
- Վիկտորինա:

Երաժշտական երկի ընկալումը համատեքստում.

- Տեղեկություններ. ստեղծման պատմությունը, սյուժեն...
- Տրամադրվածության բացահայտումը, զրույց՝ տպավորությունների մասին:
- Երաժիշտների մասնագիտություններին ծանոթանալ. երգահան, երգիչ, դիրիժոր, դաշնակահար, ջութակահար ... և դրանք կապել կոնկրետ մարդկանց հետ:

Նվագարաններ.

- Տարբերել ժողովրդական և դասական նվագարանները ձևով և հնչեղությամբ:

VII դասարան
(անցումային)

Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VII. 1 Օգտագործում է երաժշտական տարրեր և նվագարաններ իմպրովիզացիայի վարժությունների ժամանակ:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VII..8 Լսում է երաժշտական ստեղծագործություն և արտահայտում է իր վերաբերմունքը:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VII.12 Քննարկում է արվեստի բնագավառները և դրանց կապերը համադրական արվեստի մեջ:</p>
<p>Երաժշտ. VII. 2 Երգում է մենակ և ուրիշների հետ միասին:</p>	<p>Երաժշտ. VII.9 Հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է ինքնաարտահայտման միջոց:</p>	<p>Երաժշտ. VII.13 Քննարկում և իրար է համեմատում ունկնդրած ստեղծագործությունները:</p>
<p>Երաժշտ. VII. 3 Դիմում է արտահայտման տարրեր ձևերի՝ որոշակի տրամադրություն փոխանցելու համար:</p>	<p>Երաժշտ. VII.10 Մասնակցում է տարրեր միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. VII.14. Տարբերում է երաժշտական նվագարանները:</p>
<p>Երաժշտ. VII. 4 Կատարում է որոշ պարերի շարժումներ:</p>	<p>Երաժշտ. VII.11 Ներկա գտնվելով մշակութային միջոցառումներին՝ պահպանում է վարքի կանոնները:</p>	
<p>Երաժշտ. VII.5 Որոշում և գրի է առնում նոտային համակարգի նշաններ:</p>		
<p>Երաժշտ. VII.6 Ցուցաբերում է խմբում աշխատելու հմտություն-կարողություններ:</p>		
<p>Երաժշտ. VII.7 Կազմակերպում է դասարանական միջոցառումներ:</p>		

Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ.VII.1 Աշակերտն օգտագործում է երաժշտական տարրեր և նվագարաններ իմպրովիզացիայի վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգելով մեկ տոնով՝ կրկնում է պարզ ռիթմ, փոխում է հնչյունի բարձրություն, տեմպ, ռեգիստր, տեմբր...
- լսելով երաժշտություն, կատարելով երգ, շեշտերով արտահայտում է չափ,
- տարբերում է երկու քառորդ չափ՝ պարի, շարժումների (վալս, պոլկա) միջոցով,
- արտահայտում է երաժշտական տարրեր հակադրելով՝ ծանոթ մեղեդին երգում է դանդաղ-արագ (տեմպ), բարձր-ցածր (հնչեղություն), տարբեր տոնայնություններում,
- համադասարանցու (համադասարանցիների) կողմից առանց դադարի կատարված ռիթմիկ պատկերի, դաշնամուրի վրա վերցված, ակորդների հերթականությունը (օստինատո) երգելով, գործիքի վրա նվագելով, զուգորդում է տարբեր քաղցրահնչուն հնչյունների, ռիթմիկ պատկերների հետ,
- ձեռքի տակ եղած երաժշտական գործիքների և տարբեր առարկաների միջոցով ստեղծված «համույթով», «նվագախմբով» ձայնակցում է երաժշտությանը, կրկնում է ռիթմեր:

Երաժշտ.VII.2 Աշակերտը երգում է մենակ և ուրիշների հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգելով կրկնում է հնչյուններ, երաժշտական դարձվածքներ,
- ձայնով հետևում է երգչախմբի հնչմանը,
- երգչախմբում հանրաճանաչ մեղեդիներ կամ պարզ երկձայն երգեր է երգում,
- ճիշտ է արձագանքում երգչախմբի ղեկավարի ցուցումներին,
- երգում է իր կողմից ուսումնասիրվող օտար լեզուներով,
- իմաստավորում է երգի տեքստը:

Երաժշտ.VII.3 Աշակերտը դիմում է արտահայտման տարբեր ձևերի՝ որոշակի տրամադրություն փոխանցելու համար:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մնջախաղով արտահայտում է որոշակի տրամադրություն,
- ուրիշների հետ միասին բեմադրում է թատերական էտյուդներ՝ որոշակի

տրամադրությունն արտահայտելու, կոնկրետ սյուժե կամ գործող անձ մարմնավորելու նպատակով,

- բեմադրում է փոքրիկ տեսարաններ՝ երաժշտական դրվագի ունկնդրումից ստացած տպավորություններով:

Երաժշտ.VII.4 Աշակերտը կատարում է որոշ պարերի շարժումներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մարմնի շարժումներով փոխանցում է երաժշտությանը առաջացած հուզումներ,
- ելման դիրքից կրկնում է մի քանի պարային շարժումներ,
- կրկնում է պարի կամ դրա դրվագի ընդհանուր պատկերը,
- պարելով զույգով, պահպանում է հեռավորություն:

Երաժշտ.VII.5 Աշակերտը որոշում և գրանցում է նոտային համակարգի նշաններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կարդում և գրի է առնում նոտաներ սոլի բանալիում,
- տարբերում և գրի է առնում տևողություններ, դադարներ (ամբողջական, կես, քառորդ) և արտահայտում է դրանք ծափերով,
- նոտագրման մեջ որոշում է նոտաները և դրանց չափերը:

Երաժշտ.VII.6 Աշակերտը ցուցաբերում է խմբում աշխատելու հմտություն-կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- աշխատում է անհատականորեն և ուրիշների հետ միասին,
- օգնում է համադասարանցիներին,
- լսում է ուրիշի՝ իր սեփականից տարբերվող, կարծիք:

Երաժշտ.VII.7 Աշակերտը կազմակերպում է դասարանական միջոցառումներ:

Արդյունքներն ակներև են, եթե աշակերտը.

- մասնակցում է միջոցառումների պլանավորմանը,
- ներկայացման համար փնտրում-գտնում է անհրաժեշտ բեմիքեր,
- գովազդում է միջոցառում:

Երաժշտ.VII.8 Աշակերտը լսում է երաժշտական ստեղծագործություն և արտահայտում է իր վերաբերմունքը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- տպավորություններ է արտահայտում բառերով, պատկերներով,
- լսելով երաժշտություն, կատարելով երգ, ընտրում է ծանոթ երաժշտական տարրեր և բնութագրում է դրանք (բարձր, ցածր հնչում, արագ, դանդաղ տեմպ, երկրորդական, երրորդական մետր ...),
- լսելով երաժշտություն, նշում է ծանոթ գործիքի, վոկալի մուտքի պահը,
- բնութագրում է կոնկրետ երաժշտական դրվագ տեմպով, չափով,
- առաջարկված վերնագրերից ընտրում է մեկը:

Երաժշտ.VII.9 Աշակերտը հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է ինքնաարտահայտման միջոց:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- դատում է, թե ինչ տրամադրություն է առաջացնում երաժշտական ստեղծագործությունն այս կամ այն ունկնդրի մեջ,
- կապում է երաժշտական ստեղծագործության տեմպը կոնկրետ տրամադրության հետ,
- խոսում է, թե ինչ կարելի է արտահայտել մեղեդու, տեմբրի, տարրեր արտահայտչական միջոցների օգնությամբ:
- խոսում է, թե ինչպես կարելի է կոնկրետ երաժշտական տրամադրվածության, երգահանի մտահղացում արտահայտել մեղեդու, տեմբրի, այլ արտահայտչամիջոցներով:

Երաժշտ.VII.10 Աշակերտը մասնակցում է տարբեր միջոցառումների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում է դասարանական բեմադրության, դիմակահանդեսի,
- մասնակցում և ներկա է դպրոցական հաշվետու համերգի,
- մասնակցում է վիկտորինայի,
- ներկայանում է լսարանի առջև որպես կատարող, ստեղծագործող կամ համերգավար:

Երաժշտ. VII. 11 Ներկա գտնվելով մշակութային միջոցառումներին՝ աշակերտը պահպանում է վարքի նորմեր:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- չի աղմկում ներկայացման, համերգի, կինոդիտման ժամանակ, թանգարանում, ցուցահանդեսում,
- արտահայտում է իր վերաբերմունքը ստեղծագործության կատարման արվեստի նկատմամբ՝ համաձայն ընդունված կանոնների,
- զրուցակցին արտահայտվելու հնարավորություն է տալիս, չնայած տարբերվող կարծիքին:

Ողղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում

Երաժշտ. VII.12 Աշակերտը քննարկում է արվեստի բնագավառներ և դրանց կապերը համադրական արվեստի մեջ :

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- որոշում է արվեստի համադրված տեսակները. անվանում է դրանց հետ կապված մասնագիտություններ և այդ մասնագիտությունների հայտնի ներկայացուցիչների,
- նկարագրում է արվեստի բնագավառի աշխատողների գործունեություն, պատկերավոր միջոցներ, եղանակներ և նյութ,
- հիշում է տեսած կամ դրանցում ներկա գտնված համադրված արվեստի նմուշներ:

Երաժշտ. VII.13 Աշակերտը քննարկում է և իրար հետ համեմատում ունկնդրած ստեղծագործություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- բնութագրում է ունկնդրած ստեղծագործություններ՝ դրանց միջոցով փոխանցված տրամադրությամբ,
- համեմատում է նույն ժանրի տարբեր ստեղծագործություններ և խոսում է դրանց բնորոշ հատկանիշների մասին (ենթադրվող կազմ, մենակատարային նվագարան...),
- համեմատում է իրար տեղեկություններ, ստացված սովորած ստեղծագործություններից՝ ժանր, դարաշրջան, հեղինակ...

Երաժշտ. VII.14 Աշակերտը տարբերում է երաժշտական նվագարանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ձևով և հնչեղությամբ ճանաչում է երաժշտական գործիքները:

2009

- գիտի և թվում է երաժշտական նվագարանների տարբեր մասեր (լար, ստեղնաշար...),
- հիմնավորում է իր վերաբերմունքն այլ նվագարանների միջից ընտրած գործիքի հանդեպ (հավանում է դրա վրա կատարման ձևը, տեմբրը ...):

VII դասարանի ուսումնական ծրագրի բովանդակություն

Իմպրովիզացիոն վարժություններ.

- երաժշտական նվագարանների և տարրերի օգտագործմամբ:

Երգեցողություն.

- միաձայն և պարզ երկձայն երգերի կատարում երգչախմբում,
- նվագակցությամբ և առանց նվագակցության,
- անհատապես և համույթում,
- երգել օտար լեզուներով:

Պար.

- վրացական, բնորոշ և պատմա-կենցաղային պարերի շարժումներ,
- գույգով պար:

Կոմպոզիցիա.

- տրամադրվածության փոխանցում,
- տեսարանների ներկայացում:

Երաժշտական ստեղծագործություններ.

- դրվագներ բարոկկոյի, կլասիցիզմի, ռոմանտիզմի դարաշրջանի հանրաճանաչ ստեղծագործություններից,
- վրացական ժողովրդական և պրոֆեսիոնալ ստեղծագործությունների լսում, որոշում,
- դրվագներ վրացական երգահանների հանրաճանաչ ստեղծագործություններից,
- հանրաճանաչ վրացական ժողովրդական և պրոֆեսիոնալ ստեղծագործությունների լսում, որոշում:

Նոտային համակարգ.

- ջութակի բանալի,
- ընթերցում, պարզ մեղեդիների նոտաների գրառում սոլի բանալիում,
- նոտաների տևողություն. ամբողջական, կես, քառորդ,
- պարզ ռիթմի ընթերցում:

Միջոցառումներ.

- դպրոցական հաշվետու համերգ,
- դասարանական ներկայացում,
- վիկտորինա,
- ռեսուրսների ստեղծում:

Աշխատանքի ձևեր.

- անհատական և խմբային:

Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում.

- արվեստի համադրված ոլորտներ, մասնագիտություններ, արտահայտչականության միջոցներ,
- տրամադրվածության որոշում, զրույց տպավորությունների մասին,
- տեղեկություն ստեղծագործության և դրա հեղինակի մասին՝ ծրագիր (սյուժե, լիբրետո) ժանր, կենսագրական տվյալներ...

VIII դասարան

Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VIII. 1 Օգտագործում է երաժշտական տարրեր և գործիքներ իմպրովիզացիոն վարժությունների համար:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VIII.8 Լսում է երաժշտական ստեղծագործությունը և զրույց է վարում դրա մասին:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. VIII.11 Քննարկում է երաժշտության հետ կապված մասնագիտություններ:</p>
<p>Երաժշտ. VIII.2 Երգում է մենակ և ներդաշնակ մյուսների հետ միասին:</p>	<p>Երաժշտ. VIII.9 Հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է գաղափարների արտահայտման և հաղորդակցական միջոց:</p>	<p>Երաժշտ. VIII.12 Ուսումնասիրում է վրացական և համաշխարհային երաժշտական արվեստի նմուշները և դրանց հեղինակներին:</p>
<p>Երաժշտ. VIII.3 Որոշում և արտահայտում է տրամադրություն, սյուժե, թեմա:</p>	<p>Երաժշտ. VIII.10 Մասնակցում է տարբեր միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. VIII.13. Տարբերում է նվագարանները:</p>
<p>Երաժշտ. VIII. 4 Կատարում է տարբեր ոճերի պարային շարժումներ:</p>		
<p>Երաժշտ. VIII.5 Որոշում և գրի է առնում նոտային համակարգի նշանները:</p>		
<p>Երաժշտ. VIII.6 Համագործակցում է մյուսների հետ:</p>		
<p>Երաժշտ. VIII.7 Կազմակերպում է միջոցառումներ:</p>		

**Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքները և դրանց ստուգիչները
Ուղղություն. գործնական հմտություն-կարողություններ և
գաղափարների արտահայտում**

Երաժշտ.VIII.1 Աշակերտն օգտագործում է երաժշտական տարրեր և գործիքներ ինսպրովիզացիոն վարժությունների ժամանակ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- համադասարանցու (համադասարանցիների) կողմից անդադար նվագած ռիթմիկ պատկերին, ակորդների հերթականությանը (օստինատո)՝ երգելով, գործիքի վրա նվագելով համապատասխանեցնում է տարբեր քաղցրահնչուն ձայներ, ռիթմիկ պատկերներ,
- երգում է քաղցրահնչուն մոդուլյացիաներ սեկվենցիոն տեղափոխումներով,
- ներկայացնում է ռիթմիկ պատկեր բարդացված տեսքով (երգելով, թխթխկացնելով),
- ձեռքի տակ եղած երաժշտական գործիքների (խաղալիք) օգնությամբ համադասարանցիների հետ միասին կատարում է տարբեր ռիթմեր, մեղեդիներ, երաժշտական դրվագներ:

Երաժշտ.VIII. 2 Աշակերտը երգում է մենակ և ներդաշնակ մյուսների հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգում է զույգով կամ երգչախմբում մենաձայն և երկձայն երգեր,
- երգում է ինտերվալներ համադասարանցիների հետ միասին,
- երգում է կանոն տեսակի մեղեդիներ,
- չի խախտում երգչախմբի ամբողջականությունը,
- համադասարանցիների հետ միասին կատարում է թատերական ներկայացման երաժշտական ձևավորում:

Երաժշտ. VIII.3 Աշակերտը որոշում և արտահայտում է տրամադրություն, սյուժե, թեմա:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- արտահայտում է ենթադրություն համադասարանցու կողմից երգի, գործիքի վրա նվագի, շարժման միջոցով արտահայտված տրամադրության վերաբերյալ,
- տեսարանին, գործող անձին համապատասխան տեսքատ է հորինում,
- փոխանցում է գործող անձի բնավորությունը ձայնի տեմբրով, դիմախաղով, շարժումով, ռեպլիկով, ֆրազով, երաժշտական թեմայով,
- տեսարանին համապատասխան, փոխում է իր արտաքին տեսքը, կոստյում է ընտրում:

Երաժշտ. VIII.4 Աշակերտը կատարում է տարբեր ոճերի պարային շարժումներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կրկնում է պարի ընդհանուր պատկերը,
- պարելով տարբեր երաժշտության տակ՝ ստեղծագործաբար է օգտագործում սովորած շարժումները,
- պարի ժամանակ հաշիվն ինքնուրույն է վարում,
- որոշում է սովորած պարերի երաժշտություն և շարժումներ:

Երաժշտ. VIII.5 Աշակերտը որոշում և գրի է առնում նոտային համակարգի նշաններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կարդում և գրում է նոտաներ սոլի և բասի բանալիներում,
- անվանում է օկտավ, ռեգիստր,
- որոշում է ձայնաձայնալը,
- օգտագործում է նոտային համակարգի իմացությունը՝ երաժշտական ստեղծագործությունը սովորելիս,
- սխալներ թույլ չի տալիս՝ դաշնամուրի համար ստեղծագործության դրվագ արտագրելիս,
- լսելով փոքր ձևի ստեղծագործություն կամ դրվագ դաշնամուրի համար, հետևում է երաժշտությանը նոտային գրառումներով:

Երաժշտ. VIII.6 Աշակերտը համագործակցում է մյուս աշակերտների հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- լսում է ուրիշ՝ մյուսներից տարբերվող կարծիք,
- ուրիշների հետ միասին աշխատում է խնդրի լուծման վրա,
- անհրաժեշտության դեպքում օգնության է դիմում և օգնում է ուրիշներին,
- մասնակցում է աշխատանքային գործառույթների և պարտավորությունների բաշխմանը,
- գնահատում է իր և ուրիշների կատարած աշխատանքը:

Երաժշտ. VIII. 7 Աշակերտը միջոցառումներ է կազմակերպում:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- օգնում է կրտսեր դասարանցիների հանդեսի երաժշտական ձևավորման ժամանակ,
- որոնում-գտնում է բեմիքեր ներկայացման համար,

2009

- ընտրում և որոնում-գտնում է ներկայացման համար անհրաժեշտ երաժշտական, գրական նյութ,
- մասնակցում է ազդագրի, հրավիրատոմսերի, զգեստների ստեղծմանը,
- գովազդում է միջոցառումը (բաժանում է հրավիրատոմսեր, փակցնում է ազդագրեր...):

Ուղղություն. հաղորդակցություն և մեկնություն

Երաժշտ.VIII.8 Աշակերտը լսում է երաժշտական ստեղծագործություն և գրույց է վարում այդ մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- արտահայտում է իր տպավորությունները բանավոր, գրառումների տեսքով,
- տեմպով, չափով բնութագրում է կոնկրետ երաժշտական դրվագ,
- տալիս է կատարողների կազմի ընդհանուր բնութագիր,
- բնութագրում է երաժշտական ստեղծագործության ձևը,
- գրույցի ժամանակ օգտագործում է սովորած տերմիններ:

Երաժշտ.VIII.9 Աշակերտը հասկանում և ցուցադրում է, որ երաժշտությունը հանդիսանում է գաղափարների արտահայտման և հաղորդակցման միջոց:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- դատում է, թե ինչ տրամադրություն է առաջացնում իր մեջ այս կամ այն երաժշտական ստեղծագործությունը,
- կատարելով ծանոթ մեղեդի, երգ՝ փոխում է արտահայտչականության միջոցները՝ տրամադրությանը համապատասխան,
- թվում է մի քանի պատճառներ, որոնցով մարդիկ երաժշտություն են հորինում,
- դատում է, թե ինչպես է օգտագործվում երաժշտությունը տարբեր ոլորտներում (թատրոն, կինո, լրատվամիջոցներ ...):

Երաժշտ.VIII.10 Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում և ներկա է դպրոցական հաշվետու համերգին,
- համադասարանցիների հետ միասին հաճախում է հրապարակային համերգների, ներկայացումների,
- գնում է էքսկուրսիաների արվեստի գործիչների տուն-թանգարաններ,
- մասնակցում է երաժշտական վիկտորինայի,
- պատրաստում է զեկուցում և ներկայացնում է այն լսարանին:

**Ուղղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում
համատեքստում**

Երաժշտ. VIII. 11 Աշակերտը քննարկում է երաժշտության հետ կապված մասնագիտություններ:

Արդյունքներն ակներև են, եթե աշակերտը.

- համեմատում է երաժշտության հետ կապված ավանդական և ժամանակակից մասնագիտություններ՝ երգահան, կատարող, երգչախմբավար, կապելմեյստեր, դիրիժոր, պրոդյուսեր, պարերի բեմադրող, պարող, անտրեպրենյոր, ռեժիսոր, դի-ջեյ, հնչյունային օպերատոր...
- խոսում է երգահանի և կատարողի տարբերությունների մասին:

**Ուղղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում
համատեքստում**

Երաժշտ. VIII .12 Աշակերտն ուսումնասիրում է վրացական և երաժշտական արվեստի համաշխարհային հայտնի նմուշներ և դրանց հեղինակներին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- բնութագրում է երաժշտական ստեղծագործությունը տրամադրությամբ,
- համեմատում է սովորած ստեղծագործություններ՝ ժանր, ծրագիր ...
- հարցնում և պատասխանում է ստեղծագործության բովանդակության, դրա հեղինակի, ժանրի հետ կապված հարցերին,
- տարբերում է ժողովրդական երաժշտության հանրաճանաչ նմուշներ Վրաստանի անկյուններով և ժանրով,
- խոսում է բնութագրերի մասին, ըստ որոնց իրեն դուր է գալիս կամ դուր չի գալիս այս կամ այն ստեղծագործությունը:

Երաժշտ. VII.13 Աշակերտը տարբերում է երաժշտական գործիքներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- խմբավորում է նվագարանները՝ նյութով և կատարման ձևով,
- տարբերում է մենակատարման կամ համատեղ հնչման գործիքները հնչման ժամանակ և մատնացույց անում դրանք,
- խոսում է կատարման ձևի մասին՝ այս կամ այն գործիքի վրա:

VIII դասարանի ուսումնական ծրագրի բովանդակությունը

Իմպրովիզացիոն վարժություններ.

- երաժշտական տարրերի արտահայտում նվագելով, երգելով,
- մեղեդիների, ռիթմերի կատարում, «գործիքային» համույթում:

Երգեցողություն.

- մենաձայն և պարզ երկձայն երգերի, երգչախմբում կանոն տեսակի մեղեդիների կատարում,
- զույգով և համույթում,
- թատերական ներկայացման երաժշտական ձևավորում:

Պար.

- վրացական, բնորոշ և պատմա-կենցաղային պարեր,
- պարի պատկերի ուսումնասիրում, կատարում,
- պար զուգընկերոջ հետ և զույգով:

Կոմպոզիցիա.

- տրամադրվածության փոխանցում,
- տեսարանների ներկայացում:

Երաժշտական ստեղծագործություններ.

- դրվագներ տարբեր դարաշրջանների երգահանների հայտնի ստեղծագործություններից,
- վրացական ժողովրդական և պրոֆեսիոնալ ստեղծագործությունների լսում, որոշում:

Նոտային համակարգ.

- բասի բանալի,
- նոտաների, մեղեդիների ընթերցում փոքր, I, II օկտավաներում,
- նոտաների տևողություն. ամբողջական, կես, քառորդ, ութերորդական, դարձարներ,
- պարզ ռիթմի ընթերցում:

Միջոցառումներ

- դպրոցական հաշվետու համերգ,
- դասարանական ներկայացում,
- վիկտորինա,
- հրապարակային համերգ, ներկայացում,
- ռեսուրսների ստեղծում:

Աշխատանքի ձևեր.

- անհատական և խմբային:

Երաժշտական ձևեր.

- երկմաս, քառյակային, պարզ եռամաս ...

Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում.

- երաժշտության հետ կապված մասնագիտություններ,
- տրամադրվածության որոշում, զրույց տպավորությունների մասին,
- տեղեկություն ստեղծագործության և դրա հեղինակի մասին՝ ծրագիր, ժանր, կենսագրական տվյալներ...

IX դասարանի երաժշտության չափորոշիչ

Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքները և ստուգիչները

Ուղղություն՝ գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. IX.1. Աշակերտը մասնակցում է հանպատրաստից վարժություններին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգի մեջ փոխում է տեքստը,
- երգի համար մեղեդի է ընտրում,
- տարբեր տոնայնությամբ մեղեդի է կատարում՝ հնչյունների անվանումով,
- երգով, նվագով ավարտում է ուսուցչի կամ համադասարանցու կողմից սկսված մեղեդին, պատասխանում է երաժշտական արտահայտությանը:

Երաժշտ. IX.2. Աշակերտը երգում է մենակ և ուրիշների հետ համաձայնաբար:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- համադասարանցիների հետ երգում է դադարները, դաշնաձայնությունները,
- երգում է միաձայն, երկձայն կամ պարզ եռաձայն երգեր ժողովրդական, դասական և քաղաքային երգացանկից,
- երգում է համույթում, երգչախմբում,
- երաժշտական ստեղծագործության կատարման ժամանակ ընտրում է և կիրառում արտահայտչականության տարբեր միջոցներ,
- ընտրում է երգացանկը:

Երաժշտ. IX.3. Աշակերտը սահմանում է թեման, գաղափարը և ձևավորում է այն կոմպոզիցիայի, ներկայացման ձևով:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- երգչախմբին առաջարկում է կոմպոզիցիայի կամ ներկայացման գաղափար, թեմա, հիմնավորում է սեփական ընտրությունը,
- ընտրում և պատրաստում է սեփական դերը,
- համապատասխան միջոցներով արտացոլում է հերոսի բնավորությունը,
- շարադրում է դերին համապատասխան տեքստ,

- ընկերներին օգնում է բաժանել և իմաստավորել դերերը,
- համադասարանցիներին առաջարկում է հերոսի, բեմի մասին իր պատկերացումը և նախատեսում է նրանց կարծիքները,
- կոնկրետ երաժշտական ստեղծագործության տրամադրվածության դրսևորման համար ուրիշների հետ խաղարկում է տեսարան,
- կիրառում է համապատասխան երաժշտական, ձայնային և լուսավորման էֆեկտներ,
- պլանավորում է երգչական և պարային համարներ ներկայացման ընթացքում:

Երաժշտ. IX.4. Աշակերտը համադասարանցիների հետ ներկայացնում է տարբեր ոճի պարեր:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կրկնում է պարի գծագիրը,
- համադաշնակ հետևում է պարընկերոջը,
- չի խախտում համույթի ամբողջականությունը:

Երաժշտ. IX.5. Աշակերտը կիրառում է նոտային համակարգը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- որոշում է տոնայնությունները և նրանց բանալու նշանները,
- տոնայնության մեջ տարբերում է կայուն և տատանվող հնչյունները, որոշում և օգտագործում է ավտերացիայի նշանները,
- ստեղծագործությունը սովորելու, այն արտագրելու ժամանա թույլ չի տալիս սխալներ,
- համակարգչային ծրագրերով աշխատելիս՝ դրսևորում է նոտային համակարգի իմացություն,
- երաժշտական ստեղծագործություն լսելիս՝ հետևում է կլավիրին:

Ուղղություն՝ հաղորդակցություն և մեկնաբանություն

Երաժշտ. IX.6. Աշակերտը լսում է և գնահատում երաժշտական ստեղծագործությունը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- բնութագրում է կատարողների կազմը,
- ձևակերպում է և հիմնավորում սեփական վերաբերմունքը գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ (հավանում է, չի հավանում, վերնագիրը,

սյուժեն, ժանրը, սոլո նվագարան, հնչերանգ, կոնկրետ արտահայտչականության միջոցը),

- խոսելիս օգտագործում է սովորած տերմինները,
- տարբեր միջոցներով հաղորդում է ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտության հայտնի նմուշները և որոշում է դրանք լսելիս:

Երաժշտ. IX. 8. Աշակերտը մասնակցում է տարբեր բնույթի միջոցառումների:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- դատողություն է անում, թե ինչ է իմացել այս կամ այն ազգի մասին՝ ծանոթանալով նրա երաժշտությանը,
- խոսում է այն մասին, որ նախորդ դարաշրջանում ստեղծված արվեստի, երաժշտական ստեղծագործությունները ևս նրա համար հասկանալի են,
- խոսում է տեղեկության մասին, որ ստացել է ֆիլմից, ներկայացումից, համերգից,
- խոսում է, թե ինչ տեղեկություն է ստացել որևէ պատմական ժամանակաշրջանի մասին՝ ծանոթանալով այդ ժամանակաշրջանի արվեստի նմուշներին:

Երաժշտ. IX. 8. Աշակերտը մասնակցում է տարբեր բնույթի միջոցառումների:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- պլանավորում է միջոցառում,
- ներկայացման համար ստեղծում է բեմիքեր, հագուստ, ազդագիր, հրավիրատոմս,
- ընտրում է, որոնում-գտնում և մշակում ներկայացման համար անհրաժեշտ երաժշտական, գրական և պատմական նյութ,
- մասնակցում է և կազմակերպում հանդիպում-երեկոներ՝ երգահանների, կատարողների հետ
- համադասարանցիների հետ ներկա է գտնվում հրապարակային համերգի, ներկայացման,
- հաճախում է էքսկուրսիաների արվեստի տուն-թանգարաններ,
- մասնակցում է վիկտորինայի և կազմում հարցարան վիկտորինայի համար,
- պլանավորում է և մասնակցում թեմատիկ գիտաժողովների, որոնում-գտնում անհրաժեշտ նյութ (ինտերնետ, լրագիր, ամսագիր, հանրագիտարան ...)

Ուղղություն՝ երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում

Երաժշտ. IX.9. Աշակերտն ուսումնասիրում է երաժշտության դերը հասարակության կյանքում:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- դատողություն է անում մարդու կյանքում երաժշտության դերի մասին (շարական, օրորոցային, հովվի շվի, մրավալժամիերի ...),
- քննարկում է երաժշտության դերն արվեստի մյուս բնագավառներում,
- բնութագրում է ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունները և նրանց ազդեցությունը երաժշտական արվեստի վրա,
- պատասխանում է հարցերի՝ կապված անվանի երգահանի, կատարողի կենսագրության և ստեղծագործության հետ:

Երաժշտ. IX.10. Աշակերտն ընդհանրացնում է իր գիտելիքը լսած ստեղծագործության մասին:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- որոշում է և տարբերում երաժշտական ժանրերը՝ սիմֆոնիա, օպերա, բալետ, դաշնամուրային համերգ ...
- ստեղծագործությունները համեմատելու հիման վրա՝ տարբերում է հեղինակի ձեռագիրը, ժանրին բնորոշ հատկանիշները (ենթադրյալ կազմը, ձևը, սոլո նվագարան...),
- բնութագրում է երաժշտական ստեղծագործության ձևը,
- համեմատում է տարբեր դարաշրջանների, ոճի, հեղինակի ստեղծագործություններ,
- կապում է երաժշտական ստեղծագործություններն այլ առարկաներից ստացած գիտելիքի հետ,
- տարբերում է ժողովրդական երաժշտության հայտնի նմուշները՝ ըստ Վրաստանի անկյունների և ժանրերի:

Երաժշտ. IX.11. Աշակերտը տարբերում է տարբեր տեսակ համույթների և նվագախմբի կազմը:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- տարբերում է սիմֆոնիկ, կամերային, փողային, լարային նվագախմբի կազմը,
- տարբերում է համույթի տարբեր կազմը:

IX դասարանի ուսումնական ծրագրի բովանդակությունը

Հանպատրաստից վարժություններ.

- տեքստը փոխել, ընտրել մեղեդու համար,
- բանաստեղծական տեքստի համար ընտրել երաժշտություն:

Երգ.

- միաձայն, երկձայն և պարզ եռաձայն երգերի կատարում երգչախմբում,
- ժողովրդական, դասական, ժողովրդական և քաղաքային երգացանկ,
- երգացանկի ընտրություն,
- արտահայտչականության միջոցների ընտրություն:

Պար.

- վրացական, այլ ժողովուրդների, բնութագրական և պատմա-կենցաղային պարեր,
- պար համույթում:

Կոմպոզիցիա.

- տրամադրվածության հաղորդում,
- տեսարանի խաղարկում:

Երաժշտական ստեղծագործություններ.

Լսել, որոշել.

- տարբեր ժամանակաշրջանների երգահանների հայտնի ստեղծագործություններ, հատվածներ,
- վրացական ժողովրդական և պրոֆեսիոնալ ստեղծագործություններ:

Նոտային համակարգ.

- գիտենալ ալտերացիայի նշանները՝ դիեզ, բեմոլ, բեկար ...
- կարդալ երաժշտական հատվածներ:

Միջոցառումներ.

- դպրոցի հաշվետու համերգ,
- դասարանական ներկայացում,
- վիկտորինա,

2009

- հանրային ներկայացում, համերգ,
- հանդիպում երաժիշտ-կատարողների հետ,
- դպրոցական ներկայացում,
- գիտաժողով,
- ռեսուրսների ստեղծում

Երաժշտական ձևեր. ռոնդո, սոնատային, վարիացիոն ...

Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում.

- երաժշտության դերը հասարակական կյանքում,
- տրամադրվածության որոշում, զրույց տպավորությունների մասին,
- տեղեկություններ ստեղծագործության, հեղինակի, ժանրի, ուղղության, դարաշրջանի մասին ...

IX դասարանի չափորոշիչ
Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքները

Գործնական հմտություն- կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն, մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալումը համատեքստում
<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. IX.1. Մասնակցում է հանպատրաստից վարժություններին:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. IX.6. Լսում է և գնահատում երաժշտական ստեղծագործությունը:</p>	<p>Աշակերտը</p> <p>Երաժշտ. IX.9. Ուսումնասիրում է երաժշտության դերը հասարակության կյանքում:</p>
<p>Երաժշտ. IX.2. Երգում է մենակ և ուրիշների հետ համաձայնաբար:</p>	<p>Երաժշտ. IX.7. Հասկանում է և ցույց տալիս, որ արվեստը կուլտուրայի արտահայտման միջոց է:</p>	<p>Երաժշտ. IX.10. Ընդհանրացնում է իր գիտելիքը լսած ստեղծագործության մասին:</p>
<p>Երաժշտ. IX.3. Սահմանում է թեման, գաղափարը և ձևավորում է այն կոմպոզիցիայի, ներկայացման ձևով:</p>	<p>Երաժշտ. IX.8. Մասնակցում է տարբեր բնույթի միջոցառումների:</p>	<p>Երաժշտ. IX.11. Տարբերում է տարբեր տեսակ համույթների և նվագախմբի կազմը:</p>
<p>Երաժշտ. IX.4. Համադասարանցիների հետ ներկայացնում է տարբեր ոճի պարեր:</p>		
<p>Երաժշտ. IX.5. Կիրառում է նոտային համակարգը:</p>		

X դասարան
Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություն-կարողություններ և զգացմունքների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
Երաժշտ. X. 1 Աշակերտը ներգրավված է ինսպրովիզացիոն գործողության մեջ:	Երաժշտ. X. 6 Աշակերտը լսում և վերլուծում է երաժշտական ստեղծագործություն:	Երաժշտ. X. 9 Աշակերտը գիտի և բնութագրում է վրացական և համաշխարհային երաժշտական արվեստի հայտնի նմուշներ:
Երաժշտ. X. 2. Աշակերտը երգում է մենակ կամ ուրիշների հետ համաձայնեցված:	Երաժշտ. X. 7 Աշակերտը համադասարանցիների ծանոթացնում է երաժշտական արվեստի կամ երաժշտի ստեղծագործության նմուշների հետ:	Երաժշտ. X. 10 Աշակերտն ուսումնասիրում է երաժշտի և երաժշտության դերը տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում:
Երաժշտ. X. 3. Աշակերտը պարում է մենակ կամ ուրիշների հետ միասին:	Երաժշտ. X. 8 Աշակերտը քննարկում է իր և ուրիշների ստեղծագործությունը	
Երաժշտ. X. 4. Աշակերտը կոմպոզիցիաներ է ստեղծում՝ երաժշտական-համակարգչային ծրագրերի օգտագործմամբ:		
Երաժշտ. X. 5. Աշակերտը մասնակցում է նախագծերին :		

**Ուղղություն. գործնական հմտություն-կարողություններ և
զգացմունքների արտահայտում**

Երաժշտ. X. 1 Աշակերտը ներգրավված է իմպրովիզացիոն գործունեության մեջ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ստեղծում է երաժշտական կոմպոզիցիաներ ձայնի, նվագարանի, շարժման միջոցով,
- բանաստեղծական տեքստի համար երաժշտություն է ընտրում,
- ռիթմով ուղեկցում է մեղեդուն,
- մարմնի շարժումներով փոխանցում է երաժշտությանը առաջացած տրամադրություն,
- կատարելով պար՝ ստեղծագործաբար է օգտագործում ծանոթ շարժումները,
- մասնակցում է թատերական կոմպոզիցիաների:

Երաժշտ. X. 2. Աշակերտը երգում է մենակ կամ ուրիշների հետ համաձայնեցված:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կատարում է մեներգ,
- երգում է հանույթում և երգչախմբում միաձայն, երկձայն և եռաձայն երգեր,
- ստեղծագործությունը կատարում է բնագիր լեզվով,
- չի խախտում երգչախմբի ամբողջականությունը:

Երաժշտ. X. 3. Աշակերտը պարում է մենակ կամ ուրիշների հետ միասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- կատարում է մենապար,
- պարում է զույգով,
- մասնակցում է պարի բեմադրմանը:

Երաժշտ. X. 4. Աշակերտը կոմպոզիցիաներ է ստեղծում՝ երաժշտական-համակարգչային ծրագրերի օգտագործմամբ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- նախանշված նպատակին համապատասխան՝ օգտագործում է

համակարգչային ծրագրեր (երաժշտական ձայնագրություն, տեմբրի ընտրություն, բարեհնչունացում...),

- կոմպոզիցիայի ստեղծման ժամանակ օգտագործում է տեսական գիտելիքը (երաժշտական այբուբեն, երաժշտական ձև, բարեհնչունության հարցեր),
- ստեղծում է տարբեր գեղարվեստական ոճի երաժշտական կոմպոզիցիաներ,
- ստեղծում է գեղարվեստական կոմպոզիցիա, արտացոլում է գեղարվեստական գրականության, կերպարվեստի մնուշների ծանոթացումով ստացած տպավորությունները:

Երաժշտ. X. 5. Աշակերտը մասնակցում է նախագծերի:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- սահմանում է նպատակը (համերգի, երեկույթի կազմակերպում, ներկայացման բեմադրում, լրագրի, թերթի պատրաստում ...),
- հայթայթում է տեսական նյութ, ռեսուրս,
- պլանավորում է և մասնակցում տարբեր բնույթի միջոցառումների,
- մասնակցում է նախագծի ներկայացմանը և գնահատմանը:

Ուղղություն՝ հաղորդակցություն և մեկնաբանություն

Երաժշտ. X. 6. Աշակերտը լսում և վերլուծում է երաժշտական ստեղծագործություն:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- խոսում է երաժշտական ստեղծագործության ունկնդրումից առաջացած տպավորությունների մասին,
- որոշում է երաժշտական ստեղծագործության ժանրը (օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ...), ոճը (դասական, ժողովրդական, ժամանակակից...),
- լսելով երաժշտությունը՝ տարբերում է պատկերավորման միջոցները և բնութագրում է դրանք (ռիթմ, չափ, տեմբր...),
- բնութագրում է կատարողների կազմը,

Երաժշտ. X.7. Սովորողը ծանոթացնում է համադասարանցիներին երաժշտական ստեղծագործության մնուշների կամ երաժշտի ստեղծագործության հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ընտրում է իր համար հետաքրքիր երաժշտական ստեղծագործություն, կատարող, երգահան,

- հավաքված տեղեկությունը երաժշտական ստեղծագործության, այս կամ այն երաժշտի մասին սեփական տպավորությունները ներկայացնում է զեկուցման, հոդվածի տեսքով,
- փնտրում է երաժշտական (աուդիո-տեսա) նյութ, անհրաժեշտ սարքեր և օգտագործում է դրանք շնորհանդեսի ժամանակ,
- կազմակերպում է բանավեճ, հարցեր է տալիս, պատասխանում է հարցերին,
- տարածում է հավաքած նյութը. ստեղծում է արխիվ դպրոցական ընկերների հետ միասին:

Երաժշտ. X.8. Սովորողը քննարկում է իր և ուրիշների ստեղծագործությունը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում է դասին կատարված ստեղծագործական հանձնարարության, հրապարակային, դպրոցական համերգի քննարկմանը,
- գրախոսություն է գրում հրապարակային, դպրոցական համերգի վերաբերյալ,
- իրեն քաղաքավարի է պահում՝ արտահայտելով իր կարծիքը:

Ուղղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում

Երաժշտ. X. 9. Աշակերտը գիտի և բնութագրում է վրացական և համաշխարհային երաժշտական արվեստի հայտնի նմուշներ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- տարբեր եղանակներով (երգելով, գործիքի վրա նվագելով...) փոխանցում է հանրահայտ երաժշտության մեղեդի, թեմա, ռիթմիկ պատկեր,
- ճանաչում է հանրահայտ երաժշտական ստեղծագործությունն ունկնդրմամբ,
- համեմատում է նույն ժանրի տարբեր ստեղծագործություններ և խոսում է դրանց բնորոշ հատկությունների մասին (հավանական կազմ, երաժշտական ձևեր ...),
- համեմատում է նույն ժանրի ժողովրդական երգեր (թեմատիկա, տոնայնություն, կատարողների կազմ...),
- համեմատում է իրար նույն հեղինակի, դարաշրջանի ստեղծագործություններ (բնորոշ ժանրեր, թեմատիկա, գրելու ոճ...):

Երաժշտ. X 10. Աշակերտն ուսումնասիրում է երաժշտի և երաժշտության դերը տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- դատում է մարդու կյանքում երաժշտության դերի մասին (ժամերգություններ, օրորոցային, հովվի շվի, մրավալժամիեր՝ «Երկար կյանք» բազմաձայնություն),

- խոսում է, թե ինչպես կարելի է մեղեդու, տեմբրի, տարբեր արտահայտչական միջոցների օգնությամբ փոխանցել կոնկրետ երաժշտական տրամադրություն, երգահանի մտահաղացում,
- քննարկում է երաժշտության դերը արվեստի մյուս ոլորտների համար,
- պատասխանում է հայտնի երգահանի, կատարողի կենսագրության, ստեղծագործության հետ կապված հարցերին,
- համեմատում է երաժշտության հետ կապված ավանդական և ժամանակակից մասնագիտություններ՝ պրոդյուսեր, ռեժիսոր, դի-ջեյ, հնչյունային օպերատոր...
- բնութագրում է ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները և դրանց ազդեցությունը երաժշտական արվեստի վրա:

Ծրագրի բովանդակությունը

Երգեցողություն.

- երգեր ժամանակակից, վրացական ժողովրդական և քաղաքային երգացանկից
- դրվագներ վրացական և արտասահմանյան երգահանների հայտնի ստեղծագործություններից:

Պար.

- վրացական պատմա-կենցաղային, ժամանակակից պարեր:

Համակարգչային ծրագրեր.

- Cakewalk
- Finale
- Sibelius
- Voyetra

Իմպրովիզացիա.

- ստեղծագործական գործընթացի մեջ ներառում ձայնով, մարմնի շարժումով, նվագելով:

Նախագծեր.

- համերգի, ներկայացման երեկույթի կազմակերպում,
- գրքի-տետրի, ամսագրի պատրաստում:

Աշխատանքի ձևեր.

- խմբային,
- զույգով,
- անհատական:

Տեղեկություն երաժշտական արվեստի մասին.

- տարբեր դարաշրջանների հանրահայտ երաժշտական ստեղծագործություններ,
- վրացական ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտության հանրահայտ նմուշներ,
- անվանի երգահաններ և նրանց ստեղծագործությունը,
- հայտնի կատարողներ, հանրահայտ երաժիշտներ, հանրահայտ երաժշտական-թատերական կոլեկտիվներ:

**XI կամ XII դասարանների
երաժշտության կամընտրական դասընթաց**

Տարեվերջին ձեռքբերվելիք արդյունքներ

Գործնական հմտություն- կարողություններ և գաղափարների արտահայտում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում
Աշակերտը Երաժշտ. XI-XII.1 Ներգրավված է ստեղծագործական գործունեության մեջ:	Աշակերտը Երաժշտ. XI-XII.2 Լսում և վերլուծում է երաժշտական ստեղծագործություն:	Աշակերտը Երաժշտ. XI, XII.5 Հետազոտում է որոշակի դարաշրջան, ուղղություններ:
	Երաժշտ. XI, XII.3 Մասնակցում է երաժշտական միջոցառումներին:	Երաժշտ. XI, XII. 6 Ուսումնասիրում է վրացական երաժշտական արվեստի որևէ ոլորտ:
	Երաժշտ. XI, XII.4 Քննարկում է իր և ուրիշների ստեղծագործությունը	Երաժշտ. XI, XII. 7 Հետազոտում և վերլուծում է երաժշտության դերը հասարակական կյանքում:

Ուղղություն. գործնական հմտություն-կարողություններ և գաղափարների արտահայտում

Երաժշտ. XI, XII.1 Աշակերտը ներգրավված է ստեղծագործական գործունեության մեջ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- նվագում է դպրոցական գործիքային համույթում, նվագախմբում,
- երգում է մենակ, երգչախմբում, համույթում՝ իր կամ ուրիշի նվագակցությամբ, առանց նվագակցության,
- նվագակցում է երգչին, մենակատարին, համույթին,
- պարում է մենակ, համույթում,
- ստեղծում և ղեկավարում է համույթ, երգչախումբ, նվագախումբ,
- ստեղծում է երաժշտական կոմպոզիցիաներ՝ օգտագործելով ձայն, գործիքներ և համակարգչային ծրագրեր,
- ստեղծում է երաժշտա-դրամատիկական կոմպոզիցիաներ՝ օգտագործելով ձայն, գործիքներ, շարժում,
- համադասարանցիներին, կրտսեր դասարանների աշակերտներին սովորեցնում է պար, որևէ դարաշրջանի երաժշտական ստեղծագործության դրվագ և ներկայացնում է այն լսարանի առջև:

Ուղղություն՝ հաղորդակցություն և մեկնություն

Երաժշտ. XI, XII.2 Աշակերտը լսում և վերլուծում է երաժշտական ստեղծագործություն:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- խոսում է երաժշտական ստեղծագործության ունկնդրումից առաջացած տպավորությունների մասին,
- որոշում է երաժշտական ստեղծագործության ժանրը (օպերա, բալետ, սիմֆոնիա, գործիքային համերգ, վոկալ ցիկլ...), ոճը, դարաշրջանը...
- լսելով երաժշտությունը՝ տարբերում է արտահայտչականության միջոցները և բնութագրում դրանք (մեղեդի, ներդաշնակություն, ռիթմ, դինամիկա, չափ, տեմպր, կառուցվածք, ձև...),
- բնութագրում է կատարողների կազմը (համույթ, նվագախումբ, գործիքային, վոկալ տեմբրեր...),

- նոտային գրառման համաձայն կազմում է ստեղծագործության երանգային պլան, սահմանում է ձևը,
- խոսում է երաժշտական ստեղծագործության կատարման առանձնահատկությունների մասին և համեմատում է երաժշտական ստեղծագործության տարբեր մեկնություններ,
- երաժշտական ստեղծագործությունը լսելիս հետևում է կլավիրին,
- գրուցելիս օգտագործում է երաժշտական տերմիններ:

Երաժշտ. XI, XII. 3 Աշակերտը մասնակցում է երաժշտական միջոցառումներին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- պլանավորում և կազմակերպում է թեմատիկ համերգներ (դարաշրջան, երգահան, ուղղություն...), թեմատիկ կոնֆերանս, դասախոսություն-համերգ,
- ընտրում է խաղացանկ, փնտրում է նոտային նյութ,
- պլանավորում է փորձեր և հրապարակային ելույթներ,
- մասնակցում է համերգի,
- հանդես է գալիս զեկուցմամբ,
- վարում է համերգ, միջոցառում,
- արտահայտում է ենթադրություն, թե ինչ սկզբունքով կարող է ընտրվել ծրագիր, համերգի, փառատոնի համար կատարողներ:

Երաժշտ. XI. XII.4 Աշակերտը քննարկում է իր և ուրիշների ստեղծագործությունը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- մասնակցում է դասին կատարված ստեղծագործական հանձնարարության, հրապարակային, դպրոցական համերգի քննարկմանը,
- գրախոսություն է գրում հրապարակային, դպրոցական համերգի վերաբերյալ,
- իրեն քաղաքավարի է պահում՝ արտահայտելով իր կարծիքը:

Ուղղություն. երաժշտական ստեղծագործության ընկալում համատեքստում

Երաժշտ. XI, XII.5 Աշակերտը ուսումնասիրում է որոշակի դարաշրջան, ուղղություն:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ընդհանուր գծերով բնորոշում է դարաշրջաններ և դրանց երաժշտական

արվեստը (ուղղություն, ներկայացուցիչներ, հայտնի մնույցներ...),

- հիմնավորում է, թե ինչ սկզբունքով է ինքը նախապատվությունը տվել ընտրված ժամանակաշրջանին (հավանում է կոնկրետ ուղղություն, հեղինակ, ստեղծագործություն, կատարման ձև...),
- քննարկում է դարաշրջանի հիմնական բնորոշ հատկանիշներ՝ կոնկրետ հեղինակի, ստեղծագործության, կատարողի օրինակով,
- քննարկում է դարաշրջանի պատմական դրությունը,
- խոսակցություն է վարում (զուգահեռներ է անցկացնում) այդ դարաշրջանի արվեստի այլ ոլորտների, գրականության հայտնի ներկայացուցիչների և գրական ստեղծագործությունների մասին,
- քննարկում է երաժշտության և երաժշտի դերը տվյալ դարաշրջանում:

Երաժշտ. XI, XII.6 Աշակերտը հետազոտում է վրացական երաժշտական արվեստի որևէ ոլորտ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- ընտրում է վրացական երաժշտական արվեստի կոնկրետ ոլորտ (ժողովրդական երաժշտություն, ժամերգություններ, պրոֆեսիոնալ երաժշտություն, քաղաքային երգեր, էստրադա...),
- ուսումնասիրում է ընտրված ոլորտի հիմնական բնորոշ հատկանիշները, դրա նշանակումը... (ժանր, տոնայնություն, ակորդներ, ժամանակաշրջան...)՝ կոնկրետ երաժշտական ստեղծագործության, ստեղծագործությունների խմբի, հեղինակի, կատարողի օրինակով,
- ընտրված ոլորտում հետազոտում է վրաց երաժիշտների ստեղծագործությունը,
- փնտրում և հավաքում է տեղեկություններ տվյալ ոլորտի հայտնի երաժշտական մնույցների մասին,
- հավաքում է տեղեկություններ արտասահմանում ապրող և աշխատող վրաց երաժիշտների մասին և համադասարանցիներին ծանոթացնում է նրանց ստեղծագործության հետ,
- հետազոտում է երաժշտական ստեղծագործության տեքստ, գրական սկզբնաղբյուր,
- հետազոտում է ուսումնասիրված երաժշտական ստեղծագործության հետ կապված վրացական պարեր:

Երաժշտ. XI, XII.7 Աշակերտն ուսումնասիրում և վերլուծում է երաժշտության դերը հասարակական կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- դատում է երաժշտության դերի մասին իր կյանքում,
- հետազոտում է, թե ինչ տեսքով է հնչում երաժշտությունն առօրյա կյանքում (հեռուստացույց, ռադիո, բջջային հեռախոս, համակարգիչ...),
- բացատրում է, թե ինչպես կարող է ինքն օգտագործել երաժշտության ուսումնասիրման գործընթացում ստացած գիտելիքներն ու կարողությունները տարբեր մասնագիտություններում,
- խոսակցություն է վարում բարձրագույն կրթության ձևերի և երաժշտության ոլորտում կարիերայի հնարավորությունների մասին Վրաստանում և դրա սահմաններից դուրս,
- համեմատում է երաժշտական ստեղծագործության կենդանի կատարման և դրա ձայնագրության ազդեցությունն ունկնդրի վրա,
- հետազոտում է երաժշտության տարածման, փոխանցման միջոցներ (երգիչների ընտանիքներ, երգիչների դպրոցներ...նոտային գրության տարբեր համակարգեր, օրինակ՝ վրացական կեռ նշանագրություն...) տարբեր պատմական ժամանակաշրջաններում,
- դատում է երաժշտության դերի մասին հասարակության կյանքում՝ կոնկրետ օրինակների միջոցով (ազգի համար օրհներգի դերն ու նշանակությունը. Գ. Շոստակովիչի VII սիմֆոնիա Լենինգրադի պաշարման ժամանակ. «Մարտելյեզան» Ֆրանսիական հեղափոխության ժամանակ. «Շավլեզոն», «Իմ չքնաղ երկիր»-ը Վրաստանում XX դարի 80-ական թթ. ազգային շարժման ժամանակ...),
- ուսումնասիրում է ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը երաժշտական արվեստի վրա:

XI / XII դասարանների երաժշտության ուսումնական ծրագրի բովանդակություն

Երգեցողություն.

- վրացական ժողովրդական, ժամանակակից և քաղաքային երգացանկ,
- դրվագներ վրացական և արտասահմանյան երգահանների հայտնի ստեղծագործություններից,
- նվագակցությամբ և առանց դրա:

Նվագ.

- վրացական և արտասահմանյան երգահանների ստեղծագործությունների կատարում. մենակատարում, գործիքային համույթում, նվագախմբում,
- նվագակցում է վոկալ կամ մենակատարման գործիքին:

Պար.

- վրացական, պատմա-կենցաղային, ժամանակակից պարեր:

Կոմպոզիցիա.

- որոշակի գաղափարի արտահայտման համար:
- Համակարգչային ծրագրեր

Finale

Sibelius

Աշխատանքային ձևեր.

- խմբային,
- անհատական:

Միջոցառումներ.

- համերգի, պարահանդեսի կազմակերպում,
- պարի բեմադրում:

Ունկնդրում և վերլուծություն.

- դատողություն արտահայտչականության միջոցների և եղանակների մասին՝ մեղեդի, ռիթմ, դինամիկա, չափ, տեմպր, տոնայնություն, ձև,
- պատմում է իր տպավորությունների մասին,
- գրույց կատարման առանձնահատկությունների մասին:

Դարաշրջանի ուսումնասիրություն.

- դարաշրջանների, ուղղությունների՝ բարոկկո, կլասիցիզմ, ռոմանտիզմ, իմպրեսիոնիզմ, մոդեռնիզմ...և դրանց երաժշտական արվեստի բնութագրում,
- որոշակի դարաշրջանի ընտրություն և իր ընտրության հիմնավորում,
- պատմական դրության բնութագրում և այդ դարաշրջանի արվեստի այլ ոլորտների տեսություն:

Վրացական երաժշտական արվեստի հետազոտում.

- վրացական երաժշտական արվեստի կոնկրետ ոլորտի ընտրություն՝ ժողովրդական երաժշտություն, ժամերգեր, պրոֆեսիոնալ երաժշտություն, քաղաքային երգ, էստրադա, դրա ընդհանուր բնութագրություն,
- տեղեկության հավաքում արվեստի ընտրված ոլորտի հայտնի ստեղծագործությունների և գործիչների մասին,
- գրական տեքստի հետազոտում,
- զուգահեռների անցկացում ժամանակակից գրականության և արվեստի, ինչպես նաև ուրիշ դարաշրջանների և երկրների, երաժշտական ստեղծագործությունների միջև:

Երաժշտության դերի և նշանակության ուսումնասիրում.

- զրույց երաժշտության ներգործության մասին առօրյա և հասարակական կյանքում,
- երաժշտի կրթության հնարավորությունները, ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը երաժշտության վրա:

